Ուսանողի ձեռնարկ

4

Փորձություններ

Նախապատրաստվել և պատասխանել փորձություններին

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Փորձություններ

Նախապատրաստվել և պատասխանել փորձություններին

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Փործություններ
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Temptation, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

Վերջին անգամ վերանայվել է. 09-2017

Բովանդակություն

Գլուխ 1. Փորձությունը նորադարձ քրիստոնյայի կյանքում: 4

Ա. Ի՞նչ է փորձությունը:..4

Բ. Ինչքանո՞վ է փորձությունը համընկնում քրիստոնյայի կյանքին: 5

Գ. Սատանա՞ն է քեզ ստիպում դա անել:..6

Դ. Ինչքանո՞վ են քո կյանքի կարիքները համընկնում փորձությունների հետ:...8

Ե. Ինչքանո՞վ են քո ցանկությունները համընկնում փորձությունների հետ:....10

Գլուխ 2. Փորձությունները հաղթահարելու ընթացքը:...14

Ա. Որտե՞ղ ես դու կանգնած:..14

Բ. Դա փորձությո՞ւն էր:..15

Գ. Որո՞նք են փորձությունները հաղթահարելու քայլերը: 16

Գլուխ 3. Ինչպես նախապատրաստվել փորձություններին:..22

Ա. Մոտեցի՛ր Աստծուն: 22

Բ. Բավարարի՛ր քո կարիքներն Աստծո ասած ձևով: 24

Գ. Թո՛ւյլ տուր Աստծուն՝ որոշել, թե որ ցանկություններն են ճիշտ:..................28

Դ. Որոշ փորձություններ կարող են կանխարգելվել: 31

Ե. Իմացի՛ր սատանայի ռազմավարությունը: 34

Գլուխ 4. Հասկանալ Աստծո տեսակետը ձախողման և վերականգնման հարցում: 36

Ա. Ի՞նչ է լինում, երբ զիջում ես փորձությանը: 36

Բ. Ինչո՞ւ են մարդիկ զիջում փորձությանը: 42

Գ. Ի՞նչ պետք է անես փորձությանը զիջելուց հետո: 46

Եզրակացություն...47

Գլուխ 1.
Փորձությունը նորադարձ քրիստոնյայի կյանքում

Որոշ նորադարձ քրիստոնյաների համար «փորձություն» բառը կարող է պարզապես նշանակել դժվարություն: «Է՛հ, սատանան նորից հաղթեց ինձ», - պարտվելուց հետո հոգոց հանելով ասում են նրանք:

Իսկ պե՞տք է նորադարձ քրիստոնյաները վախենան փորձություններից: Ի՞նչ են իրականում իրենցից ներկայացնում փորձությունները: Ինչպե՞ս մարդը կարող է հաջողությամբ դեմ կանգնել փորձություններին: Միայն դո՞ւ ես՝ որպես քրիստոնյա, հանդիպում փորձությունների: Կարո՞ղ են փորձությունները կանխվել: Ի՞նչ կարող ես անել, որպեսզի նախապատրաստվես փորձություններին: Ի՞նչ պետք է անես, եթե փորձության մեջ վայր ես ընկել: Ահա՛ այս հարցերին է նվիրված այս դասընթացը:

Եկե՛ք սկսենք՝ սահմանելով «փորձություն» հասկացությունը:

Ա. Ի՞նչ է փորձությունը:

Որոշ մարդիկ «փորձություն» բառը շատ ընդհանրական ձևով են օգտագործում: Նրանք որևէ տեսակի նեղությունը, դժվարությունը կամ խնդիրն անվանում են «փորձություն»: Մենք «փորձություն» բառն այս դասընթացի մեջ օգտագործում ենք միայն այն իրավիճակների համար, երբ սատանան մարդուն մղում է մեղք գործելուն: Ահա՛ փորձության վերաբերյալ այն հստակ սահմանումը, որը մենք կօգտագործենք.

Փորձություն

Երբ սատանան փորձում է քեզ մղել՝ խախտելու Աստծո օրենքները՝ քո կյանքում եղած որևէ կարիք կամ ցանկություն բավարարելու համար:

Սատանան սիրում է խաբել մարդկանց: Նա վերցնում է երևակայական կարիքները և քեզ համոզում, որ դրանք, իրոք, կարևոր են: Նա քեզ խաբում է, որ մտածես, որ քո խնդիրները կվերջանան, եթե դու քո կարիքները կամ ցանկությունները, ինչքան հնարավոր է, ամենահեշտ ու ամենաարագ ձևով բավարարես: Միակ խնդիրն այն է, որ եթե դու հետևես նրա տված խորհրդին և անես այն, ինչ նա է քեզ ասում, դու Աստծո օրենքներից գոնե մեկը կխախտես:

Ոչ մի մեղսալի կամ սխալ բան չկա կյանքում կարիքներ ունենալու մեջ: Աստված քեզ ստեղծել է, որ դու ունենաս և բավարարես դրանք: Սակայն սատանայի խորամանկությունը նրանում է, որ նա փորձում է այնպես անել, որ դու քո կարիքները հոգաս՝ խախտելով Աստծո օրենքները:

Եթե դու քաղցած ես, սատանան կփորձի քեզ մղել, որ քո կարիքը տեսնես զուտ եսասիրական տեսանկյունից: «Դու սոված ես: Ահա՛ մի հեշտ ձև՝ քո կարիքը բավարարելու: Պարզապես թռցրո՛ւ այդ բրդուճը, երբ խանութի աշխատողը չի նայում: Նա հաստատ չի նկատի մի փոքրիկ բրդուճի բացակայությունը»: Սատանայի խորամանկությունը նրանում է, որ քեզ մտածել տա, որ քո խնդրի համար իր առաջարկած լուծումը շատ խելացի է: Նա քաջալերում է եսասիրական լուծումներ, որոնք միշտ տանում են մեղքի:

Աստված փորձու՞մ է մարդկանց: Հակոբոս 1:13-14-ը հստակ պատասխան է տալիս այս հարցին:

Հակոբոս 1:13-14

«Չլինի թե որևէ մեկը, փորձության մեջ գտնվելով, ասի՝ Աստծո կողմից եմ փորձվում, քանի որ Աստված չարով չի փորձվում, ոչ էլ Ինքն է որևէ մեկին փորձում: Սակայն յուրաքանչյուրը փորձվում է իր ցանկություններից հրապուրվելով ու խաբվելով»:

Հստակ է, որ Աստված չի փորձում քրիստոնյաներին, որ մեղք գործեն: Սակայն, միևնույն ժամանակ, քո կարիքներն իրական են:

Բ. Ինչքանո՞վ է փորձությունը համընկնում քրիստոնյայի կյանքին:

Փորձությունների մարտադաշտը սովորաբար հանդիսանում է մեր միտքը: Փորձությունները սկսում են որպես մտքեր: Գրիգորը նայում է մի գեղեցիկ սվիտերի և ինքն իր մեջ մտածում. «Ախպե՛ր, ես մրսում եմ: Ես, իրոք, այդ սվիտերի կարիքն ունեմ: Հետաքրքիր է, չե՞մ կարող դա այնպես գողանալ, որ ոչ ոք չտեսնի»: Գրիգորի մոտեցումն այդ մտքերին կորոշի նրա գործողությունները: Եթե նա որոշի զիջել փորձությանը, հավանաբար կփորձի գողանալ այդ սվիտերը: Կամ էլ նա կարող է դիմադրել փորձությանը:

Քո վերաբերմունքը մեծապես ազդում է այն բանի վրա, թե ինչպես կպատասխանես փորձությանը: Եթե դու քո մեջ աստվածաշնչյան մտածելակերպ ես զարգացրել, ապա քեզ համար կարող է հեշտ լինել փորձությանը դիմադրելը: Մենք ավելի ուշ՝ սույն դասընթացի մեջ, հանգամանորեն կդիտարկենք այս հարցը:

Քրիստոնեական կյանքում շատ ավելին կա, քան պարզապես շարունակ սատանայի դեմ պայքարելը: Փորձություններ մի՛ փնտրիր: Քո ուշադրությունը կենտրոնացրո՛ւ քրիստոնեական կյանքով ապրելու վրա՝ հետևելով Քրիստոսի օրինակին: Երբ փորձությունները հանդիպում են քեզ, համարի՛ր, որ դրանցից ամեն մեկը մի հնարավորություն է՝ Աստծուն ավելի մոտենալու: Նա է այն Միակը, Ով կարող է քեզ տալ զորություն և իմաստություն՝ հաղթահարելու քեզ հանդիպող ցանկացած փորձություն:

Քրիստոնյայի համար մեղքի փորձության հանդիպելը նորմալ է: Մարդը չի կարող այնքան հոգևոր դառնալ, որ այլևս փորձություններ չունենա: Փորձություններ կարող են գալ մինչև կյանքի վերջը: Բայց և այնպես, դու կարող ես բարեհաջող կերպով հաղթահարել բոլոր փորձությունները:

Աստվածաշունչը հստակեցնում է, որ փորձություն կրելը մեղք չէ: Հիսուսը շատ անգամներ մեղք գործելու փորձություններ կրեց: Սատանան դիմեց նաև այն կարիքներին, որ Հիսուսն էլ իր կյանքում ուներ, նա օգտագործում էր եսասիրական քայլերին ուղղված նույն խորհուրդները, ինչը քո հանդեպ էր անում:

Եբրայեցիների 4:15

«Որովհետև ոչ թե այնպիսի Քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ այնպիսին, որ ամեն կետում փորձվեց մեզ նման, սակայն՝ առանց մեղքի»:

Փորձվելու և մեղք գործելու միջև տարբերությունը հստակ է: Դու կարիք չունես քեզ մեղավոր զգալ այն բանի համար, որ շատ փորձություններ ես կրում, եթե, իհա՛րկե, չես հետևում սատանայի առաջարկած լուծումներին: Յուրաքանչյուր փորձություն քեզ համար կարող է լինել մի նոր հնարավորություն՝ ավելի ուժեղ քրիստոնյա դառնալու:

Գ. Սատանա՞ն է քեզ ստիպում դա անել:

Դու չես կարող ազնվորեն ասել. «Սատանան ինձ ստիպեց դա անել»: Մինչդեռ և՛ Աստված, և՛ սատանան հնարավորություն են տալիս քեզ՝ քո կարիքներն ու ցանկությունները բավարարելու, նրանցից ոչ մեկը քեզ չի ստիպի իր կամքն անել: Ընտրությունը քոնն է:

Մենք կարող ենք ասել, որ այս հնարավորությունները նման են դռների: Ե՛վ սատանան, և՛ Աստված քո առաջ դռներ կդնեն: Երկուսն էլ քեզ կքաջալերեն, որպեսզի իրենց մեթոդով լուծես քո խնդիրները: Սատանայի դռները փորձություններ են: Աստծո առաջարկած դռները ոչ-եսասիրական և

վարձատրվող դռներ են: Երբեմն Աստված նույն խնդրի լուծման համար երկու կամ երեք դռներ կարող է քո առաջ դնել: Սատանան էլ կարող է նույն բանն անել:

Սատանան կփորձի իր առաջարկած ճանապարհն ավելի գրավիչ դարձնել, քան Աստծունն է: Սակայն նա քեզ ընդամենը կես ճշմարտություն է ասում:

Օրինակ, Գոհարիկն ուզում է մտերիմներ ունենալ: Նրա դասընկերներից որոշները նրան հրավիրում են գնալ երեկույթի: Երբ նա գնում է երեկույթի, տեսնում է, որ բոլորը մարիխուանա են ծխում: Սատանան Գոհարիկի առաջ շատ գայթակղիչ դուռ է բացում: «Դե՛հ, Գոհարի՛կ, նայի՛ր, թե քանի ընկերներ կարող ես ունենալ: Մի ծուխը քեզ չի վնասի: Մտածի՛ր, թե ինչքան ուրախ քեզ կզգաս այս նոր ընկերների հետ»:

Այս իրավիճակում Աստծո դուռը Գոհարիկի համար կարող է այնքան էլ գրավիչ չթվալ: Եթե նա մտնելու լինի Աստծո դռնով, հավանաբար պետք է հեռանա այդ երեկույթից: Եթե այդպես վարվի, երեկույթին ներկա մարդկանցից շատերը, հնարավոր է, մերժեն նրան իրենց ընկերությունից: Եթե նա անցնի Աստծո դռնով, ստիպված կլինի ընկերներ փնտրել մեկ այլ տեղում: Բայց որտե՞ղ: Ո՞ւմ:

Եթե դու մտնես սատանայի դռնով, միշտ Աստծո օրենքներից առնվազն մեկը կխախտես: Սակայն սատանան քեզ այդ մասին ոչինչ չի ասում: Նա չի ասում. «Արի՛, Գոհարի՛կ, սա սատանան է խոսում: Ես փորձության եմ ենթարկում քեզ, որ դու խախտես Աստծո օրենքները»: Ո՛չ, սատանան պարզապես քեզ կասի, որ իր առաջարկած ձևն ամենաարագ և ամենահեշտ ձևն է քո կյանքի կարիքները կամ ցանկությունները բավարարելու համար:

Երբեմն Աստծո դուռը գրավիչ չի թվում: Բայց ժամանակի ընթացքում ապացուցվում է, որ Նրա ձևը լավագույնն է քո կյանքի կարիքները կամ ցանկությունները բավարարելու համար: Սատանայի ճանապարհը շատ անգամներ ավելի գրավիչ է թվում, որովհետև նա քեզ չի հայտնում իր ասած ձևով անելու վնասակար հետևանքների մասին: Նա միայն ասում է, որ իր դռնով անցնելով՝ դու քո կարիքների բավարարումը կստանաս հենց այդ պահին:

Նա Եդեմի պարտեզում Եվային չասաց, որ վռնդվելու է պարտեզից և կրելու է մեղքի բոլոր սարսափելի հետևանքները, եթե ուտի այդ մեկ ծառի պտղից: Երբ Եվան մտավ սատանայի դռնով, այդ պահից դուրս մնաց Աստծո պաշտպանությունից:

Աստված ուզում է, որ մենք ամբողջական և լիարժեք կյանք վարենք, որտեղ բոլոր կարիքները բավարարված են: Առավել հանգամանալից նայենք մեր կյանքի կարիքներին և տեսնենք, թե ինչ ձևով են դրանք կապված մեզ հանդիպող փորձությունների հետ:

Դ. Ինչքանո՞վ են քո կյանքի կարիքները համընկնում փորձությունների հետ:

Ուսուցման ուղեցույցի երկրորդ Նախագիծը, որը համընթաց է այս դասընթացի հետ, խնդրում է քեզ՝ գրել մի քանի փորձություններ, որոնց դու վերջերս ես հանդիպել: Հնարավոր է՝ դու ուզենաս քո մտքում պահել այդ դեպքերը՝ կարիքներից վերաբերյալ հետևյալ տեղեկությունը դիտարկելու ընթացքում:

Մեր կյանքում եղած կարիքներին անդրադառնալիս օգտակար կլինի, եթե մի քանի ընդհանուր չափանիշներ օգտագործենք նմանատիպ կարիքները խմբավորելու համար:

Մարդկանց հիմնական կարիքները

1. **Ֆիզիկական կարիքներ.**
   — սնունդ, հագուստ, տաքություն:

2. **Անվտանգության կարիքներ.**
   — պատկանել մարդկային որևէ խմբի,
   — պաշտպանված լինել,
   — ինչ-որ խմբի մաս կազմել,
   — հասկանալ կյանքի կանոնները:

3. **Հասարակական կարիքներ.**
   — ունենալ մտերիմ ընկերներ,
   — գտնվել հարմարավետ վայրում,
   — ընկերություն անել նրանց հետ, ովքեր՝ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, նույն ձևով են մտածում,
   — սիրել և սիրված լինել:

4. **Ինքնահարգանքի կարիքներ.**
   — ընդունվել մյուսների կողմից,
   — հարգվել մյուսների կողմից,
   — կարևոր լինել:

5. **Նվաճման կարիքներ.**
   — օգտագործել սեփական ընդունակություններն ու կարողությունները,
   — անել իմաստալից բաներ, որոնք տալիս են նվաճման զգացողություն,
   — իմանալ, որ աճում ես որպես անձնավորություն,
   — աշխատանքի մեջ առաջընթաց ունենալ:

6. **Հոգևոր կարիքներ.**
   — անձամբ ճանաչել Աստծուն, լցված լինել Նրա ներկայությամբ,
   — ունենալ մեղքերի թողություն, որպեսզի հանցանքի զգացողությունը վերանա սեփական կյանքից,
   — լինել հաջողակ քրիստոնյա՝ անելով Աստծո կամքը:

Մարդկանց հիմնական կարիքների այս աղյուսակը հիմնված է Աբրահամ Մասլոուի՝ «Կարիքների հիերարխիայի» վրա, լրացուցիչ մշակումը Լորանս Կոլբերգի կողմից (Հոգևոր կարիքների վերաբերյալ):

Աստված մեզ ստեղծել է այս կարիքներով: Նա մեզ համար ապահովել է դրանց լուծմանն ուղղված ճանապարհներ: Ուրեմն ո՞ր կարիքներն են ամենակարևորը:

Սատանան քեզ կփորձի այն ասպարեզներում, որտեղ դու ունես կարիքներ, որոնք վերջին շրջանում չեն բավարարվել: Օրինակ, նա քեզ չի փորձի, որ սնունդ գողանաս կուշտ ուտելուց րոպեներ անց: Սակայն սատանան փորձեց Հիսուսին, որ Նա քարը հաց դարձնի 40 օր ծոմ պահելուց հետո: Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսը սոված էր, երբ սատանան փորձեց Նրան, որ դա անի: Հիսուսն, իրոք, ուտելու կարիք ուներ:

Որոշ դեպքերում, եթե մի կարիք բավարարված չէ, այն կարող է դուրս մղել քո ունեցած մյուս կարիքը: Եթե դու լողալ չգիտես և գտնվում ես ջրի տակ, ապա օդի կարիքն այդ պահին շատ ավելի կարևոր է, քան որևէ այլ կարիք, որ դու կարող էիր ունենալ: Այդ պահին դու կմոռանաս սովածության կամ հաջորդ օրը քննություն տալու մասին:

Վերևում թվարկված կարիքների հինգ խմբերը հաճախ նույն հերթականությամբ էլ ընթանում են: Մարդը պետք է իրեն անվտանգ զգա նախքան հասարակական, ինքնահարգանքի և ձեռք բերման կարիքները: Թեև պարտադիր չէ, որ դու քո բոլոր կարիքները բավարարես՝ նախքան կկարողանաս քո հոգևոր կարիքները բավարարել, միևնույն ժամանակ՝ դրանք կարող են մեծապես ազդել, թե ինչքանով հեշտ կլինի քո հոգևոր կարիքները բավարարել: Եթե մարդը շատ սոված է, դժվար թե հետաքրքրված լինի քննարկել իր հոգևոր կարիքները:

Դա իրո՞ք կարիք է

1. Ես պետք է վիճաբանեմ այն մարդու հետ, ով սխալ է:
2. Ես պետք է պաշտպանեմ իմ հեղինակությունը: Ես պետք է կռվեմ, որպեսզի ապացուցեմ, որ նա չի կարող ինձ արհամարհել:
3. Ես պետք է քննադատեմ այդ մարդուն իր տհաճ վերաբերմունքի համար:
4. Ես չեմ կարողանում չնախանձել նրանց՝ նոր մեքենայի համար:

Եթե դու ուզում ես հաջողակ քրիստոնյա լինել, պետք է հայտնաբերես Աստծո ասած ձևը քո կարիքները հոգալու համար: Դու նաև պետք է սովորես տարբերել քո կարիքը, երբ այն առաջանա: Բայց և այնպես, սատանան շատ անգամներ կկառչի քո **ցանկություններին** և կփորձի քեզ հավատացնել, որ դրանք իրական կարիքներ են: Արի՛ ավելի հանգամանալից նայենք մեր ցանկություններին, և թե ինչպես են դրանք համընկնում փորձությունների հետ:

Ե. Ինչքանո՞վ են քո ցանկությունները համընկնում փորձությունների հետ:

Ի՞նչ տարբերություն կա ցանկության և կարիքի միջև: Կարո՞ղ են ցանկությունները դառնալ կարիք: Աստված անհանգստացած է մեր կարիքնե՞րը բավարարելով, թե՞ Նա ուզում է բավարարել նաև մեր ցանկությունները: Մարդը կարո՞ղ է մեղսալից ցանկություններ ունենալ: Ինչպե՞ս կարող է քրիստոնյան իմանալ, թե արդյո՞ք այն, ինչ նա ցանկանում է, Աստծուն հաճելի է:

Առաջին փորձությունը, որը գրանցված է Աստվածաշնչում, կենտրոնացած է ցանկության, այլ ոչ թե կարիքի վրա: Կարդա՛ Ծննդոցի 3-րդ գլուխը: Սատանան համոզեց Եվային, որ եթե նա այդ մեկ ծառի պտղից ուտի, Աստծո պես կդառնա՝ իմանալով չարի ու բարու միջև եղած տարբերությունը: Եվան կարիք ունե՞ր Աստծո պես լինել: Ո՛չ, սակայն սատանան իրեն հատուկ ձևերով տպավորություն ստեղծեց, որ դա նրան կօգներ ավելի լավ անձնավորություն դառնալ: Եվայի ցանկությունն արագ տիրեց նրա սրտին, և նա անհնազանդ լինելով Աստծուն՝ մեղք գործեց:

Մեր ցանկությունների և մեր կարիքների միջև եղած կապը

Օրինակ, դու ուտելիքի ***կարիք*** ունես, սակայն հնարավոր է՝ ***ցանկանաս*** մի մեծ բաժին տաք շոկոլադե քաղցրավենիք:

Ձմռանը դու վերարկուի ***կարիք*** ունես, հատկապես, երբ դրսում ձյուն է գալիս: Բայց հնարավոր է՝ դու ***ցանկանաս*** երկար կաշվե վերարկու ունենալ:

Դու ***կարիք*** ունես ընկերներ ունենալու, բայց հնարավոր է՝ ***ցանկանաս*** կոնկրետ մարդու հետ ընկերանալ, հատկապես, եթե նա հարուստ է կամ շատ լավ տեսք ունի:

Կարիքը մի բան է, որն անհրաժեշտ է ունենալ, որպեսզի ապրենք և պահպանենք կյանքն իր ամբողջ ներուժով:

Ցանկությունը մի բան է, որը մենք ուզում ենք ունենալ, բայց որն ունենալն անհրաժեշտություն չէ:

Որոշ մեր կարիքներ սերտորեն կապված են մեր ցանկությունների հետ: Ամեն օր մենք որոշակի սննդի կարիք ունենք, բայց մեզնից շատերն ուզում են ավելի շատ ուտել, քան անհրաժեշտ է. հավելյալ չափով կարտոֆիլ, դեսերտ, կոնֆետ, կամ քաղցրեղեն: Մենք կարող ենք ընկնել մեր ցանկությունները բավարարելու սովորության մեջ այնպես, որ սկսենք հավատալ, որ մենք, իրոք, այդ հավելյալ սննդի կարիքն ունենք:

Այն, ինչ տեղի ունեցավ Ալբերտի կյանքում, տեղի է ունեցել հազարավոր ուրիշների հետ: Նա սկսեց թմրանյութ ծխել, որովհետև ուզում էր իր հասակակիցների կողմից ընդունված լինել: Սատանան կառչել էր ընկերներ ունենալու նրա կարիքին: Մի օր նրա ընկերները ծանր թմրանյութ առաջարկեցին: Ալբերտն անտեսեց նոր ընկերներ ունենալու Աստծո ասած ձևը և շուտով կախվածություն ձեռք բերեց հերոինից: Այն, ինչը սկսվեց որպես ցանկություն, դարձավ նրա կյանքը իշխող և տիրող մի ուժ:

Երբ Հիսուսը փորձվեց, որ մեղք գործի

Սատանան երեք փորձություններ բերեց, որպեսզի Հիսուսն Իր կյանքում տարբեր կարիքներ և ցանկություններ զգա:

1-ին փորձություն. քարերը հաց դարձնել: Մատթեոս 4:3-4:

Կարիք. Հիսուսը ֆիզիկապես սոված էր: Նա սննդի կարիք ուներ:

Ցանկություն. Ապացուցի՛ր, որ Դու ունես զորություն՝ բավարարելու այս կարիքը Քո կյանքում: Ապացուցի՛ր, որ Դու կարող ես հրաշք գործել:

2-րդ փորձություն. թռչել տաճարի գագաթից: Մատթեոս 4:5-7:

Ցանկություն. Ապացուցի՛ր, որ Դու վստահում ես Աստծուն:

Ցանկություն. Ապացուցի՛ր, որ Աստված Քեզ կպահի:

3-րդ փորձություն. սատանան Հիսուսին առաջարկում է ամբողջ աշխարհի ղեկավարումը: Մատթեոս 4:8-10:

Ամբողջ աշխարհի թագավորությունները ցույց տալով՝ սատանան այդ ամենն առաջարկում է Հիսուսին, եթե միայն Նա խոնարհվի և երկրպագի իրեն:

Ցանկություն. աշխարհին հաղթելու և նվաճելու Իր նպատակը հեշտ ձևով կատարել՝ ի տարբերություն Աստծո ասած ձևի, որը վերջնական արդյունքում Հիսուսին պետք է տաներ խաչի տառապալից մահվան:

Սատանան իր կարողության սահմաններում ամեն բան կանի, որպեսզի քեզ սխալ ցանկությունների ստրուկ դարձնի: Աստվածաշունչը սրա վերաբերյալ զորեղ խորհուրդներ ունի, որոնք բացատրում են, թե ինչու են որոշ քրիստոնյաներ տխուր:

Հակոբոս 4:1-3

«Որտեղի՞ց են պատերազմները և որտեղի՞ց են կռիվները: Մի՞թե այն ցանկություններից չեն, որ ձեր անդամների հետ են պատերազմում: Ցանկանում եք և չունեք, սպանում եք և նախանձում ու չեք կարողանում ձեր ուզածին հասնել. կռվում եք և պայքարում, սակայն չունեք, որովհետև չեք

խնդրում: Խնդրում եք և չեք ստանում, որովհետև վատ նպատակով եք խնդրում, որ ձեր ցանկություններին ծառայեցնեք»:

Սեքսը մի ասպարեզ է, որի շուրջ սատանան բազմաթիվ անօրեն ու չար ցանկություններ է քաշալերում: Սեքսի հետ կապված այդ չար ցանկություններից են՝ համասեռամոլ հարաբերությունները, ուրիշի կնոջ կամ ամուսնու հանդեպ կիրքը, մանկապղծությունը: Սեքսուալ երևակայությունները նույնպես պատկանում են այս ասպարեզին: Սատանայից ներշնչված այլ ցանկություններ են՝ վնասել կամ սպանել ինչ-որ մեկին, ցանկանալ ուրիշի ունեցվածքը, գողանալ, ստել, անիծել և վրեժ լուծել: Սատանայից ներշնչված այս ցանկությունները եսասիրական են և սիրուց զուրկ: Դրանք իրական կարիքների աղավաղումներ են:

Աստված մեզ պատվիրում է ազատվել այս չար ցանկություններից: Տե՛ս Եփեսացիների 4:17-32-ը և Կողոսացիների 3:5-15-ը: Շատ դեպքերում միայն Աստված կարող է քեզ ուժ տալ, որ քո կյանքից հեռացնես այս չար ցանկությունները և փոխարինես դրանք Աստծո հատկություններով: Քրիստոսի հետևորդ լինել նշանակում է՝ ձգտել մտածել Քրիստոսի պես, արձագանքել, ինչպես Նա կարձագանքեր:

Երբեմն հորինված մի ցանկություն կարող է ծածկել մեր կյանքի իրական կարիքը: Եթե դու կարողանաս տարբերել այդ կարիքը, դա կօգնի քեզ տեսնել իրական խնդրին տանող ցանկության անցյալը: Սա կհեշտացնի այդ խնդրի լուծման համար Աստծո օգնությանը դիմելը:

Երբ դու որևէ չար ցանկությանը հետևելու համար փորձվում ես, կարող ես վստահ լինել՝ սա փորձություն է, որը տանում է մեղքի: Հեռուստահաղորդումները հաճախ են ներառում մեղսալից ցանկություններ, օրինակ՝ գովազդները հաճախ են սեքս ներառում: Պոռնոգրաֆիան համացանցում հեշտ հասանելի է: Հեռուստատեսությունն ու ֆիլմերը հաճախ են ցուցադրում մեղսալից տեսարաններ, որոնք հեշտությամբ կարող են մեղսալից ցանկություններ առաջացնել:

Աստված չի ուզում, որ դու անտեսես քո բոլոր ցանկությունները: Որոշ ցանկություններ մեղսալից չեն: Եթե դու քո ներսում մեղսալից ցանկություններ ունես, դրանք կարող են փոխվել: Ցանկությունները նման են վերաբերմունքի. երկուսն էլ կարելի է սովորել: Հիմա, երբ դու ճշմարիտ քրիստոնյա ես դարձել, պետք է դրանք զգուշությամբ գնահատես և զարգացնես այն ցանկությունները, որոնք Աստված ուզում է, որ ունենաս:

Երկրորդ Տիմոթեոս թղթում որոշ լավ խորհուրդներ են տրված մեր ցանկությունների վերաբերյալ:

Բ Տիմոթեոս 2:22

«Երիտասարդական ցանկություններից էլ փախի՛ր ու գնա՛ արդարության, հավատի, սիրո, խաղաղության հետևից՝ նրանց հետ, ովքեր Տիրոջ անունը կանչում են մաքուր սրտով»:

Սովորի՛ր՝ ինչպես ցանկանալ հավատ, սեր և խաղաղություն:
Սաղմոս 37-ը գեղեցիկ խոստում է տալիս մեր ցանկությունների վերաբերյալ:

Սաղմոս 37: 4-5

«Նաև Տիրոջով հրճվիր, և Նա քեզ կտա սրտիդ փափագները: Տիրոջը հանձնի՛ր ճամփադ ու Նրան վստահի՛ր, և Նա կիրագործի այն»:

Աստված անհանգստացած է քո բոլոր ցանկություններով ու կարիքներով:
Նա խոստացել է հոգալ քո բոլոր կարիքները: Նա ուզում է բավարարել քո սրտի ցանկությունները, եթե քո սիրտը հանձնվել է՝ անելու Նրա կամքը:

Գլուխ 2.

Փորձությունները հաղթահարելու ընթացքը

Քեզ հանդիպած յուրաքանչյուր փորձությունը ակնթարթորեն հաղթահարելու հրաշագործ լուծումներ չկան, սակայն Աստված խոստացել է օգնել քեզ, երբ դու փորձության մեջ լինես: Դու ունես նաև Սուրբ Հոգին՝ որպես Առաջնորդ և Ուսուցիչ: Դու կարող ես սովորել հաջողակ լինել փորձություններին դեմ կանգնելու մեջ: Ուրեմն, որտեղի՞ց պետք է նորադարձ քրիստոնյան սկսի:

Ա. Որտե՞ղ ես դու կանգնած:

Դու երբևէ փորձե՞լ ես քայլել ցանկապատի կամ պատի վրայով: Եթե փորձել ես, ապա գիտես, թե ինչքան դժվար է դա անել, հատկապես, եթե այն նեղ է: Որոշ նորադարձ քրիստոնյաներ փորձում են քայլել ցանկապատի վրայով: Նրանք դեռ ամբողջությամբ չեն որոշել, թե արդյոք ուզո՞ւմ են թողնել մեղքի հետ կապված բոլոր հաճույքները:

Ցանկապատի մի կողմում այն ապրելակերպն է, որով Աստված ուզում է, որ Իր զավակներն ապրեն: Ցանկապատի մյուս կողմում սատանան է, որ փորձում է քեզ գայթակղել՝ գնալու և վայելելու իր կարճաժամկետ հաճույքները:

Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է որոշում կայացնի: Դու չես կարող ողջ կյանքդ ցանկապատի վրայով քայլել: Պետք է ընտրես կա՛մ Աստծո ճանապարհը, կա՛մ սատանայի: Եթե ուզում ես փորձություններին դեմ կանգնելու մեջ հաջողակ լինել, պետք է ամբողջությամբ նվիրվես Աստծո ճանապարհին հետևելուն:

Հակոբոս 4:7-8-ը մեզ տալիս է հստակ խորհուրդներ, թե ինչ է ուզում Աստված, որ քրիստոնյաներն անեն, երբ փորձվում են սատանայից:

> **Հակոբոս 4:7-8**
>
> **«Ուրեմն հնազանդվեցե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, և նա ձեզանից կփախչի: Աստծուն մոտեցե՛ք, և Նա ձեզ կմոտենա, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը, մեղավորնե՛ր, և սրտներդ մաքրեցե՛ք, երկմիտնե՛ր»:**

Եթե դու որոշել ես մոտենալ Աստծուն, Նա խոստացել է՝ կմոտենա քեզ: Սա մեկ այլ կարևոր բան է մատնանշում: Ո՞ր ուղղությամբ ես դու գնում: Յուրաքանչյուր օր

անցնելով դու ավելի մոտենո՞ւմ ես Աստծուն, թե՞ փորձում ես հաստատուն ուղղություն պահել՝ քայլելով ցանկապատի վրայով:

Այսպիսով, փորձությունները հաղթահարելու առաջին մեծ քայլը սա է՝ որոշել, թե որ կողմն ես դու ուզում լինել՝ Աստծո՞, թե՞ սատանայի: Երբ կայացնես այս որոշումը, դրանից հետո շատ ավելի հեշտ կլինի փորձությունները հաղթահարելու հետևյալ խորհուրդները կիրառել քո կյանքում:

Բ. Դա փորձությո՞ւն էր:

Նորադարձ քրիստոնյաներին հանդիպող մեծ խնդիրներց մեկն այն է, որ կարողանան հասկանալ, որ փորձվում են: Շատ անգամ փորձությունն արդեն վերջացած է լինում, նախքան նրանք կկարողանան հասկանալ, որ փորձության մեջ են եղել: Սա սատանայի ծրագրի մի մասն է: Նա չի գալիս մի մեծ պլակատ թափահարելով և ասելով. «Սա ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ է»: Հաճախ նա նույնիսկ չի էլ երևում: Նա պարզապես ասում է. «Դու ինչ-որ բա՞ն ես ուզում, կամ կարի՞ք ունես: Ահա՛ այն ձեռք բերելու հեշտ ձև»:

Եթե ուզում ես սատանայի փորձություններին դեմ կանգնելու մեջ հաջողակ լինել, պետք է սովորես տարբերել փորձությունները, երբ դրանք սկսվում են: Մտքով մի քանի օր հետ գնա: Կարո՞ղ ես հիշել մի դեպք, երբ սատանան քեզ փորձության մեջ է գցել, որ մեղք գործես: Ինչպե՞ս ես դու դա տարբերում: Ինչքա՞ն շուտ ես տարբերում փորձությունը: Լինո՞ւմ են դեպքեր, երբ դժվարանում ես տարբերել՝ տվյալ միտքը փորձությո՞ւն է, թե՞ ոչ:

Աստված խոստանում է օգնել քեզ, երբ փորձության հանդիպես: Նա կխոսի քո խղճմտանքի միջոցով և կասի, երբ սատանան փորձի մեղքի մեջ գցել քեզ: Դու պետք է սովորես ուշադիր լսել Աստծուն և հասկանալ, երբ Նա կխոսի քեզ հետ:

Մեկ այլ ձևը, որով դու կարող ես իմանալ, թե երբ է սատանան փորձում քեզ, քո դիմաց եղած հնարավորությունը դիտարկելն է: Հարցրո՞ւ ինքդ քեզ. «Եթե ես սա անեմ, Աստծո օրենքներից մեկը կխախտե՞մ»: Եթե պատասխանը «այո» է, քեզ արդեն հասկանալի է, որ այս հնարավորությունն Աստծուց չէ:

Մեկ այլ հարց, որ դու կարող ես ինքդ քեզ ուղղել, սա է. «Եթե ես սա անեմ, դա կօգնի՞ ինձ ավելի մոտենալ Աստծուն»: Եթե կարծում ես, որ դա քեզ կհեռացնի Աստծուց, ապա ավելի ուշադի՛ր եղիր: Դու կարող ես սատանայի փորձություններից մեկի համար թիրախ դառնալ:

Յուրաքանչյուր նորադարձ քրիստոնյա փորձությունների համար թիրախ է լինելու: Սատանան ամեն բան կանի, որպեսզի կործանի այն նոր կյանքը, որ դու գտել ես Քրիստոսում: Այնպես որ, կարևոր է զարգացնել ընդունակություններ՝ ինչքան հնարավոր է շուտ տարբերելու փորձությունը, երբ այն գալիս է: Սա անհրաժեշտություն է, եթե դու ուզում ես հաջողակ լինել փորձությանը դեմ կանգնելու մեջ և բավարարել քո կարիքներն ու ցանկությունները Աստծո ուզած ձևով:

Երբ դու գիտակցում ես, որ փորձվում ես, կարող ես այն ձևով արձագանքել, որը քեզ կօգնի դեմ կանգնել սատանայի առաջարկություններին:

Գ. Որո՞նք են փորձությունները հաղթահարելու քայլերը:

Եթե ուզում ես փորձությունները հաղթահարելու հարցում հաջողակ լինել, պետք է ծրագիր կամ ընթացք ունենաս, որը դու կկարողանաս կիրառել, երբ փորձության մեջ լինես: Երբ բանակը թշնամու դեմ պատերազմի է պատրաստվում, ծրագիր է մշակում, իսկ հետո, երբ գնում է ճակատամարտի, հետևում է դրան: Մենք պետք է նույնն անենք ի պատասխան փորձություններին, որոնք գալիս են մեր կյանքի մեջ: Մենք պետք է ծրագիր ունենանք և որոշենք հետևել այդ ծրագրին ամեն անգամ, երբ փորձության մեջ լինենք: Հիմա ե՛կ հայացք գցենք փորձությանը պատասխանելու ձևին, որը քեզ կօգնի ավելի մոտենալ Աստծուն, երբ փորձության մեջ լինես:

Փորձությունը հաղթահարելու 6 քայլեր

1. Գիտակցի՛ր, որ փորձության մեջ ես:
2. Ասա՛ «ո՛չ» փորձությանը:
3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:
4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ մղել, որ բավարարեմ»:
5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ասած ձևը:
6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Այժմ ավելի մանրամասն դիտարկենք այս քայլերից յուրաքանչյուրը: Փորձություններին պատասխանելու այս ձևն ուսումնասիրելիս մտքիդ մեջ պահիր մի քանի փորձություններ, որոնց դու վերջերս ես հանդիպել: Փորձի՛ր պատկերացնել, թե ինչպես կարող էիր պատասխանել այդ փորձություններին այս վեց քայլերով:

1. Գիտակցի՛ր, որ փորձության մեջ ես:

Այս թեման արդեն քննարկվել է սույն գրքի 12-րդ էջում: Երբ դու փորձության մեջ ես, հնարավոր է՝ ուզենաս ինքդ քեզ բարձրաձայն ասել. «Ես մեղքի փորձության մեջ եմ»: Պարզապես ինքդ քեզ լսելը, այդ բառերն ասելիս, կարող է օգնել՝ գնալ այս շարքի մյուս քայլին:

Սատանան խաբելու վարպետ է: Սատանան կփորձի քեզ խաբել, որ դու մեղքի փորձության մեջ չես: Դու պետք է յուրաքանչյուր ցանկություն զգուշությամբ ենթարկես «ճշմարտության ստուգման» և ստուգես Աստծո ճշմարտության միջոցով: Այդ ժամանակ կկարողանաս տեսնել, որ դա մեղքի փորձություն է:

2. Ասա՛ «ո՛չ» փորձությանը:

Հասկանալով, որ մեղքի փորձության մեջ ես, պետք է որոշում կայացնես: Կամ դու կենթարկվես փորձությանը և կմտածես, թե ինչքան հեշտ լուծում է դա քո կարիքի համար, կամ էլ կմերժես այն: Եթե ասես «ո՛չ», դու հստակորեն ցույց կտաս, որ Աստծո կողմից ես: Սակայն եթե ասես՝ «Հնարավոր է», կամ՝ «Թող մտածեմ դրա մասին», ապա դու ցույց կտաս, որ դեռևս փորձում ես քայլել ցանկապատի վրայով:

Երբ Հիսուսն էր փորձվում մեղք գործելու համար, նա մերժեց մտածել Իր կարիքները բավարարելու սատանայի առաջարկությունների շուրջ: Հիսուսը սատանայի ցանկացած փորձությանը «ո՛չ» ասաց: Դու կարող ես նույնն անել: Աստված խոստացել է քեզ ուժ տալ, որի կարիքն ունես փորձությունները հաղթահարելու համար (Տե՛ս Ա Կորնթացիների 10:13):

Մի՛ վարանիր «ո՛չ» ասել սատանայի ցանկացած փորձության: Ինչքան շուտ դու «ո՛չ» ասես, այնքան հեշտ կլինի հաջորդ քայլին անցնելը:

«Ո՛չ» ասելու մեկ այլ ձև է՝ հեռանալ այն վայրից կամ մարդուց, որ փորձության պատճառ է հանդիսանում քեզ համար: Եթե դու կարող ես հեռանալ, կամ այլ կողմ նայել, կամ ազատվել այն բանից, որը քեզ փորձության է ենթարկում, արա՛ դա: Հին Կտակարանում Հովսեփն այդպես վարվեց, երբ շատ դժվար փորձության հանդիպեց: (Տե՛ս Ծննդոց 39): Առակաց 4:23-27 լրացուցիչ խորհուրդներ է տալիս սեռական բնույթի փորձություններից խուսափելու համար:

Ա Թեսաղոնիկեցիների 5:22-ում գրված է. «Չարի ամեն երևույթից հեռո՛ւ մնացեք»: Որոշ փորձությունների դեմ կանգնելու ամենահեշտ ձևը կարող է լինել այս համարում նշված՝ Աստծո խորհրդին հետևելը. պարզապես հեռու մնալ դրանից:

3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:

Անկե՛ղծ եղիր Աստծո հետ: Նրան ասա՛, թե ինչ ես դու իրոք զգում: Դու կարող ես զգալ, որ սատանայի փորձությունները, իրոք, գայթակղիչ են: Մի՛ վախեցիր Աստծուն ասել, թե իրականում ինչ ես զգում: Սատանան ուզում է, որ դու միայն իր հետ խոսես: Նա չի ուզում, որ դու Աստծուց խորհուրդ հարցնես իր ծրագրերի վերաբերյալ:

Դու կարիք չունես սատանային որևէ բան ապացուցել:
Հիսուսն էլ չէր փորձում սատանային որևէ բան ապացուցել:
Տե՛ս Մատթեոսի 4:1-11:

Երբ դու աղոթում ես Աստծուն, ձեր խոսակցության ընթացքում ներկայացրո՛ւ Նրա խոստումները: Սա քեզ կօգնի թարմացնել քո հիշողությունն այն բանի վերաբերյալ, թե ինչ է Աստված խոստացել քեզ համար անել: Նրա խոստումները նաև կարող են քեզ քաջալերել՝ հայտնաբերելու քո կարիքներն ու ցանկությունները բավարարելու Աստծո ասած ձևը: Սուրբ Գրքից մեջբերումնե՛ր արա, որոնք վերաբերում են փորձություններին: Հիսուսն այդպես արեց, երբ Ինքն էր փորձվում:

Խնդրի՛ր Աստծուն՝ քեզ ուժ և ցանկություն տալ՝ դեմ կանգնելու փորձությանը: Շարունակի՛ր խոսել Աստծո հետ, երբ անցնելիս կլինես փորձություններին դեմ կանգնելու ձևի մնացած քայլերով:

4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ մղել, որ բավարարեմ»:

Սատանան միշտ կառչում է մեր ունեցած կարիքին կամ ցանկությանը: Փորձի՛ր, ինչքան հնարավոր է, արագ հասկանալ, թե ինչ կարիք կամ ցանկություն է դա: Միևնույն ժամանակ, դու պետք է մտածես սատանայի ասած ձևով անելու հետևանքների մասին: Սատանան չի ուզում, որ մտածես վաղվա կամ հաջորդ շաբաթվա վնասակար հետևանքների մասին: Նա միայն ուզում է, որ դու մտածես այն հաճույքի մասին, որ կզգաս տվյալ պահին քո կարիքը կամ ցանկությունն իր ասած ձևով բավարարելու դեպքում:

Սատանայից եկած ցանկացած փորձության վերջնական արդյունքը մեղքն է: Հակոբոս 1:14-16-ը բացատրում է, թե ինչպես է այդ պրոցեսը տեղի ունենում:

Հակոբոս 1:14-16

«Սակայն յուրաքանչյուրը փորձվում է իր ցանկություններից հրապուրվելով ու խաբվելով: Այնուհետև ցանկությունը հղանալով՝ մեղք է ծնում, և կատարված մեղքը մահ է ծնում: Մի՛ խաբվեք, իմ սիրելի՛ եղբայրներ»:

Դու դժվարանու՞մ ես կողմնորոշվել, թե քո կյանքում ինչ կարիքի կամ ցանկության հետ է կապված տվյալ փորձությունը: Ուրեմն աղոթի՛ր ու խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ հասկանալ այս փորձության հետ կապված կարիքներն ու ցանկությունները: Աստծուց օգնությո՛ւն խնդրիր այդ կարիքներն ու ցանկություններն Աստծո ասած ձևով բավարարելու հարցում: Եթե փորձությունը վերաբերում է մեղսալից ցանկությանը, խնդրի՛ր Աստծո զորությունը՝ այդ ցանկությանը դեմ կանգնելու և այն բարեպաշտ ցանկությունով փոխարինելու համար:

Եթե դու գիտես այն կարիքը կամ ցանկությունը, որը սատանան քեզ մղում է բավարարել, ուրեմն դու պատրաստ ես անելու հաջորդ քայլը:

5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ասած ձևը:

Աստվածաշունչը լի է խորհուրդներով, թե ինչպես է Աստված ուզում, որ դու բավարարես քո որևէ կարիք կամ ցանկություն: Միակ խնդիրը կարող է լինել գտնելը, թե ինչ է Աստված ուզում, որ դու անես որոշակի իրավիճակում: Համենայն դեպս, փորձության մեջ լինելով՝ հաճախ դու չես կարող հանել քո համաբարբառն ու 10 կամ 15 համարներ նայել, որոնք վերաբերում են այն կարիքին կամ ցանկությանը, որի առնչությամբ դու փորձվում ես: Մենք ավելի ուշ առավել մանրամասն կնայենք, թե ինչպես կարելի է նախապատրաստվել փորձություններին:

Մենք, միանշանակ, ունենք Աստծո խոստումը, որ Նա կհոգա մեր բոլոր կարիքներն ու ցանկությունները: Փիլիպպեցիների 4:19-ը ասում է. «Բայց իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա Փառքի մեջ՝ Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով»: Սատանան կփորձի քեզ խաբել, որ քո ցանկություններից որոշներն իրոք կարիքներ են: Աստված խոստանում է հոգալ նաև քո ցանկությունները, եթե դու ամբողջությամբ նվիրված լինես Նրան:

Սաղմոս 37: 4-5

«Նաև Տիրոջով հրճվի՛ր, և Նա քեզ կտա սրտիդ փափագները: Տիրոջը հանձնի՛ր ճամփադ ու Նրան վստահի՛ր, և Նա կիրագործի այն»:

Երբ սատանան քո կյանքում որևէ ցանկություն բավարարելու համար քեզ փորձության է ենթարկում, հարցը, որ դու պետք է ինքդ քեզ տաս, սա է. «Ինչքանո՞վ է իմ այս ցանկության բավարարումը համապատասխանում Աստծո առաջնայնությունների հետ ինձ համար»: Ի՞նչն է այս պահին իմ կյանքում ամենակարևորը: Ինչքա՜ն հեշտ է մեր ողջ ժամանակը ծախսել սեփական փափագներն ու ցանկությունները հոգալու վրա, այնպես որ մենք կարող ենք մոռանալ ուրիշների կարիքների մասին: Սատանան ուզում է, որ դու եսասեր լինես: Աստված ուզում է, որ դու տեսնես քեզնից այն կողմ և ներգրավվես ուրիշներին օգնելու մեջ:

Ինչ փորձություն էլ որ լինի, Աստված խոստանում է, որ դրանից դուրս գալու ճանապարհ կտա: Երկու հիմնական բաներ կան փորձությունից դուրս գալու՝ Աստծո ասած ձևը գտնելու համար: Առաջին, դու պետք է որոշես հավաքել քո մտքերը: Միշտ չէ, որ կկարողանաս կանգնեցնել դեպի քեզ եկող մեղսալից մտքերը, սակայն արագ կկարողանաս որոշել, թե ինչ ես անելու՝ հասկանալուց հետո, որ դա փորձություն է: Դու պետք է գերի վերցնես այդ մտքերն ու դրանք հնազանդեցնես Քրիստոսին:

Բ Կորնթացիների 10:5

«Խորտակելով առարկություններն ու Աստծո գիտության դեմ գոռոզացած ամեն մի բարձր բան, և ամեն մի միտք գերելով՝ հնազանդեցնում ենք Քրիստոսին»:

Աստված քեզ ուժ կտա դա անելու, սակայն քո փոխարեն գործը չի անի: Դո՛ւ պետք է գերի վերցնես այդ մտքերը:

Երկրորդ, Աստված խոստացել է բոլոր փորձություններից ելք տալ: Դու պետք է փնտրես այդ ելքը և խնդրես Աստծուն՝ օգնել քեզ գտնելու այն:

Ա Կորնթացիների 10:13

«Դուք ոչ մի այլ փորձության չեք ենթարկվել, բացի դրանից, ինչ հատուկ է մարդուն. բայց Աստված հավատարիմ է և չի թողնի ձեզ, որ ձեր կարողությունից ավելի փորձվեք, այլ փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել»:

Հնարավոր է՝ դու չիմանաս քո կարիքներն Աստծո ասած ձևով բավարարելու լավագույն ճանապարհը, բայց կարող ես իմանալ, որ յուրաքանչյուր փորձության ժամանակ Աստված քեզ կօգնի ելք գտնել: Աստված միշտ պահում է Իր խոստումները: Բայց եթե ուզում ես խանգարել սատանային՝ ապագայում որոշակի ասպարեզում քեզ փորձության ենթարկելու հարցում, ուրեմն բացահայտի՛ր տվյալ կարիքը կամ ցանկությունը բավարարելու Աստծո ասած ձևը, իսկ հետո արա՛ հաջորդ քայլը:

6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Փորձությանը «ո՛չ» ասել չի նշանակում, որ դու պետք է «ոչ» ասես քո կյանքի հետ կապված կարիքին:

Որո՞նք են այն մի քանի գործնական քայլերը, որ դու կարող ես անել, որպեսզի սկսես քո կարիքները բավարարել Աստծո ասած ձևով: Առաջինը, գտի՛ր աստվածաշնչյան համարներ, որոնցում ասվում է, թե ինչպես է Աստված ուզում, որ դու արձագանքես այդ կարիքին կամ ցանկությանը: Անգի՛ր արա տվյալ համարը: Այնուհետև, դի՛ր պարզ, փոքր նպատակներ, որոնք դու կարող ես մի օրում իրականացնել: Հնարավոր է՝ այս հարցում դու օգնության կարիք ունենաս: Մ՛ի վախեցիր սա քննարկել քո քրիստոնյա ընկերներից մեկի հետ: Ըստ Ա կորնթացիների 10:13-ի՝ նա էլ, հնարավոր է, հանդիպել է նույն կամ նմանատիպ փորձության:

Անմիջապես սկսի՛ր այս նպատակների համար աշխատել: Ինչքան շուտ սկսես, այնքան դժվար կլինի սատանայի համար քեզ փորձության մեջ գցել: Նաև վերահաստատի՛ր սատանայի փորձություններին դեմ կանգնելու քո որոշումը:

Աստծուն ավելի մոտենալով՝ դու ավելի հեշտությամբ կիմանաս, թե ինչպես է Աստված ուզում, որ բավարարես քո ունեցած կարիքներն ու ցանկությունները:

Այս վեց քայլերը քեզ կօգնեն հաջողակ լինել մեղքի փորձությունները հաղթահարելու հարցում: Սակայն մի՛ փորձիր այս քայլերին հետևել քո կարողությամբ: Խնդրի՛ր Աստծուն, որ քեզ ուժ և ցանկություն տա՝ հաղթահարելու քեզ հանդիպող յուրաքանչյուր փորձություն: Քո կյանքի փորձից ելնելով՝ կասես. «Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ» (Փիլիպպեցիների 4:13): Ինչքան շատ փորձություններ հաղթահարես, այնքան ավելի ուժեղ կլինես քո քրիստոնեական կյանքում:

Գլուխ 3.

Ինչպես նախապատրաստվել փորձություններին

Դու կարող ես վստահ լինել, որ մեղքի փորձություններ քեզ կհանդիպեն: Յուրաքանչյուր քրիստոնյա կշարունակի մեղքի փորձության հանդիպել մինչև իր մահվան օրը, թեև փորձության տեսակներն ու դեպքերը կարող են փոփոխվել: Ե՛կ ավելի կոնկրետ դիտարկենք մի քանի քայլեր, որոնք կարող ես կատարել, որպեսզի նախապատրաստվես քո կյանքի գալիք փորձություններին:

Ա. Մոտեցի՛ր Աստծուն:

Փորձություններին նախապատրաստվելու ամենակարևոր ձևն ուղղակի կապ չունի որևէ կոնկրետ փորձության հետ: Հակոբոս 4:7-8-ը բացատրում է, թե ինչ պետք է անել, երբ փորձվում ես սատանայից:

Հակոբոս 4:7-8

«Ուրեմն հնազանդվեցե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, և նա ձեզանից կփախչի: Աստծուն մոտեցե՛ք, և Նա ձեզ կմոտենա, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը, մեղավորնե՛ր, և սրտներդ մաքրեցե՛ք, երկմիտնե՛ր»:

Սատանայի հարձակումներին դեմ կանգնելու գաղտնիքը Աստծուն մոտենալն է: Սա է նաև հանդիսանում գալիք փորձություններին նախապատրաստվելու ամենակարևոր ձևը: Աստծո խոստումը Փիլիպպեցիների 4:13-ում հստակ է: «Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ»: Աստված հատուկ կերպով քեզ կսպառազինի, որպեսզի դեմ կանգնես ցանկացած փորձության, եթե մոտենաս Աստծուն:

Եփեսացիների 6:10-11

«Վերջապես, եղբայրնե՛րս, ուժե՛ղ եղեք Տիրոջով և Նրա զորության կարողությամբ: Ձեր վրա հագեք Աստծո սպառազինությունը, որ կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարքներին»:

Եթե դու, երբ հանդիպում ես փորձությունների, ուզում ես Աստծո զորությունն ունենալ քո ներսում, ուրեմն այն պետք է ունենաս նախքան փորձությունները

կգան: Բասկետբոլիստը չի սպասում խաղաշրջանի առաջին խաղի սկսվելուն, որ պատրաստվի: Դրա համար նա բավականին շուտ է որոշում կայացնում. պարապում և աշխատում է շաբաթներ շարունակ՝ նախքան խաղը սկսվելը: Երբ միանում է թիմին, արդեն գիտի, որ տքնաջան աշխատանքի բազմաթիվ ժամեր են իրեն սպասում: Սակայն այս ամբողջ նախապատրաստությունը իմաստ կունենա, եթե խաղն սկսվելուց հետո նա ի վիճակի լինի օգնել իր թիմին հաղթելու:

Եթե ուզում ես մեղքի փորձությունները հաղթահարելու հարցում հաջողակ լինել, պետք է ամեն օր ժամանակ հատկացնես Աստվածաշունչ կարդալուն և աղոթելուն, որպեսզի ունենաս քեզ պետք եղած զորությունը: Նաև կարևոր է վստահ լինել, որ Քրիստոսի հանդեպ քո նվիրվածությունը հաստատ է:

Նա, ով դեռևս դժվարանում է որոշել՝ դառնա՞լ, թե՞ չդառնալ ճշմարիտ քրիստոնյա, կդժվարանա ինքն իրեն վարժեցնել աղոթելուն և Աստվածաշունչ ուսումնասիրելուն: Եթե դու ամբողջությամբ նվիրվել ես Քրիստոսին, քեզ համար հեշտ կլինի ամբողջ սրտով ջանքեր ներդնել՝ նախապատրաստվելու փորձություններին, որոնք հաստատ գալու են:

Աստված խոստացել է պաշտպանել յուրաքանչյուր քրիստոնյայի, երբ նրանք մեղքի փորձությունների հանդիպեն:

Ա Կորնթացիների 10:13

«Դուք ոչ մի այլ փորձության չեք ենթարկվել, բացի դրանից, ինչ հատուկ է մարդուն. Բայց Աստված հավատարիմ է և չի թողնի ձեզ, որ ձեր կարողությունից ավելի փորձվեք, այլ փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել»:

Հիմնական բանը, որ դու պետք է այստեղ հասկանաս, այն է, որ Աստված ելք կտա քեզ հանդիպող ցանկացած փորձությունից դուրս գալու համար: Փորձություններին նախապատրաստվելիս, պետք է սովորես Աստծո «ելք»-երի մասին: Աստվածաշունչը հստակ ցուցումներ է տալիս, թե ինչպես խուսափել փորձություններից: Ծննդոց 39-ում, Հովսեփը փախչում է այն անձնավորությունից, ով փորձում էր նրան մեղքի մեջ գցել: Դա կարող է լինել Աստծո ճանապարհը քեզ համար, որպեսզի հետ պահի կոնկրետ մեղքի մեջ ընկնելուց: Մյուս դեպքերում Աստծո ճանապարհը կարող է լինել սատանային դիմադրելն ու հաստատ կանգնելը՝ դավանելով Աստծո խոստումը, այն է՝ ուժ տալ քեզ մեղքի փորձությանը դեմ կանգնելու համար:

Յուրաքանչյուր փորձությանը պատասխանելու համար Աստծո ճանապարհը սովորելը մեկ այլ հարց է առաջացնում: Դու պետք է սովորես լսել Աստծուն: Աստված, մեզ տալով Իր խորհուրդները, հազվադեպ է խոսում բարձր, բամբ ձայնով: Նա սովորաբար խոսում է մեր խղճմտանքի մեջ «ցածր, մեղմ ձայնով»:

Գաղատացիների 5:16

«Ուստի ձեզ ասում եմ. Հոգով քայլեցե՛ք, և մարմնավորի ցանկությունը չեք կատարի»:

Սուրբ Հոգին քեզ կառաջնորդի ճշմարտության մեջ, երբ դու ուսումնասիրես Նրա Խոսքն ու աղոթես: Եթե կա կոնկրետ փորձություն, որը քեզ մեծ անհանգստություն է պատճառում, խնդրի՛ր Սուրբ Հոգուն՝ ցույց տալ այն հաղթահարելու Աստծո ճանապարհը: Աստծուն լսել սովորելը, հնարավոր է, քեզ համար հեշտ չլինի: Սակայն Աստված հավատարիմ է և համբերատար: Աստծուն մոտենալով՝ քեզ համար ավելի հեշտ կլինի լսել, թե ինչ է Նա ասում:

Բ. Բավարարի՛ր քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Քրիստոնյաներից շատերն ունեն առնվազն մեկ փորձություն, որը սատանան շարունակ օգտագործում է՝ նրանց մեղքի մեջ գցելու համար: Եթե դու էլ ունես այսպիսի փորձություն, ուրեմն քեզ համար օգտակար կլինի առավել մանրամասն դիտարկել այն:

1. Հայտնաբերի՛ր քո հիմնական փորձությունները:

Հնարավոր է՝ դու ցանկանաս դիմել այն աշխատանքին, որ կատարել էիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ երկուսի՝*«Հայտնաբերելով իմ փորձությունները»* բաժնում: Այս Նախագծում դու հայտնաբերել և ուսումնասիրել էիր քո վերջին փորձություններից մի քանիսը: Հիմա կարող ես ժամանակ հատկացնել և պատասխանել նույն հարցերին այն փորձությունների վերաբերյալ, որոնց դու ամենաշատն ես հանդիպում:

Փորձի՛ր տեսնել, կա՞ արդյոք այդ փորձության որևէ օրինաչափություն: Այն գալիս է օրվա որոշակի ժամի՞, օրինակ՝ ճաշից անմիջապես հետո: Կամ, միգուցե, այն գալիս է, երբ դու կոնկրետ մի տեղում ես, կամ կոնկրետ մարդկանց շրջապատում: Այս տեղեկությունը կարող է քեզ օգնել՝ հայտնաբերելու համապատասխան ձևը, որով կարող ես նախապատրաստվել փորձությանը:

Գագիկը մի քանի օր առաջ է դարձել ճշմարիտ քրիստոնյա: Նա ուզում է թողնել ծխելը, սակայն շատ է դժվարանում: Ամեն անգամ՝ ճաշից հետո, ծխելու փորձությունը հատկապես սաստկանում է: Ինչո՞ւ: Որովհետև միշտ սովորություն ուներ ծխել ճաշից անմիջապես հետո: «Դա ինձ օգնում էր լիցքաթափվել,- պատմում է Գագիկը,- դա նման էր բեզեյի վրայի բալի հատիկին. այն ամբողջացնում էր իմ ճաշը»:

Հնարավոր է նաև, որ դու ոչ մի օրինաչափություն չգտար, թե երբ է հիմնական փորձությունը գալիս քո կյանքում: Եթե այդպես է, հաջորդ մի քանի օրերի ընթացքում ժամանա՛կ հատկացրու, որպեսզի ամեն անգամ նշես, երբ այդ

փորձությունը գա: Դու կարող ես օգտագործել Նախագիծ երկուսի նույն հարցերը, որոնք գտնվում են քո Ուսուցման ուղեցույցում:

2. Հայտնաբերի՛ր կարիքը, որը սատանան փորձում է քեզ մղել՝ բավարարելու համար:

Երբ դու արդեն ունես այն փորձության հստակ պատկերը, որը սատանան ամենաշատն է օգտագործում քո հանդեպ, ուրեմն ժամանակն է պատրաստվել դրա համար: Փորձի՛ր հասկանալ, թե որ կարիքը կամ ցանկությունն է քո կյանքում սատանան փորձում քեզ մղել, որ բավարարես:

Գագիկի ծխելու փորձությունը հեշտ չէ զնահատել այս կետում: Ամբողջացման զգացողությունը, որ նա ունենում էր ճաշից հետո ծխելով, հավանական է, լավագույնս համապատասխանում է «ցանկություններ» բաժնին: Մենք նշեցինք, որ սատանան փորձում է մեզ, որպեսզի որևէ կարիք կամ ցանկություն բավարարենք մեր կյանքում: Բայց և այնպես, պարզվում է՝ կային նաև այլ կարիքներ, որ ծխելը լրացնում էր Գագիկի կյանքում, որոնց մասին, սակայն, նա տեղյակ չէր: Օրինակ, հնարավոր է, որ ծխելը նրա համար լիցքաթափվելու միջոց էր: Եթե դա Գագիկին հիմա անհանգստացնում է և մղում ճաշից հետո ծխելուն, նա, հավանաբար, կարող է եզրակացնել, որ ծխելն անցյալում օգնում էր՝ բավարարելու այդ կարիքն իր կյանքում:

Գագիկի համար այս գայթակղությունը հաղթահարելու զաղտնիքը նրանում է, որ տվյալ ցանկություններն ու կարիքները բավարարելու այլ ձևեր պետք է գտնի: Հենց որ նա գտնի Աստծո ասած ձևը՝ լրացնելու համար լիցքաթափվելու և «ամբողջանալու» զգացողությունը, որոնք այնքան հաճելի էին դարձնում նրա ճաշելը, նա արդեն մոտ կլինի այդ փորձության լուծումը գտնելուն: Հիմա կարևոր քայլն այն կլինի, որ ամեն անգամ այդ կարիքը բավարարվի Աստծո ասած ձևով:

Այս գրքի 7-րդ և 8-րդ էջերում, մենք քննարկեցինք տարբեր տեսակի կարիքներ, որ բոլորս ունենք: Դու կարող ես հիմա վերանայել այդ մասը և ինքդ քեզ հարցնել. «Այս կարիքներից ո՞րն եմ ես դժվարանում բավարարել»: Դու անհրաժեշտություն չունես սպասելու, մինչև սատանան քեզ փորձի, որպեսզի գտնես քո կարիքների բավարարումը: Հենց որ տեսնում ես՝ որևէ կարիք ունես, սկսի՛ր փնտրել Աստծո ասած ձևը՝ այն բավարարելու համար: Որոշ ասպարեզներում լավագույն տարբերակը, որպեսզի խանգարես սատանային քեզ փորձության մեջ գցել, նախօրոք այդ կարիքն Աստծո ասած ձևով բավարարելն է:

3. Հայտնաբերի՛ր քո կարիքները բավարարելու Աստծո ասած ձևը:

Մենք ունենք խոստում Փիլիպպեցիների 4:19-ում. «Բայց իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա Փառքի մեջ՝ Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով»: Մենք նաև խոստում ունենք Հովհաննես 16:13-ում.

«Սակայն, երբ Նա՝ Ճշմարտության Հոգին գա, Նա ձեզ ամեն ճշմարտության կառաջնորդի, որովհետև Նա Ինքն իրենից չի խոսելու, այլ ինչ որ լսի, ա՛յն պիտի խոսի և ձեզ պիտի ցույց տա գալիք բաները»:

Քանի որ Սուրբ Հոգին քո ուսուցիչն է, աղոթելն ու Աստծուն լսելն ամենակարևոր քայլերից մեկն է, որպեսզի գտնես քո կարիքները բավարարելու Աստծո ասած ձևը:

Իմացի՛ր, թե ինչ է ասում Աստվածաշունչը փորձությունների և քո կյանքում եղած կարիքների մասին: Ահա՛ հարցեր, որոնք դու պետք է տաս ինքդ քեզ՝ ուսումնասիրելիս, թե ինչ է ասում Աստվածաշունչը փորձության վերաբերյալ:

Ի՞նչ է ասում Աստված փորձությունների պատճառների մասին:

Հակոբոս 1:14-15
Ա Հովհաննես 2:15-17

Ի՞նչ է ասում Աստված փորձությունների մեջ պարտվելու հետևանքների մասին:

Հակոբոս 1:15
Հռոմեացիների 6:23
Ա Հովհաննես 2:17
Առակաց 5:7-14
Առակաց 6:25-31

Ինչպե՞ս կարող եմ հաղթահարել այս փորձությունը:

Աստծո ո՞ր խոստումներին ես կարող եմ դիմել:

Ինչպե՞ս է Աստված ուզում, որ ես բավարարեմ այս կարիքը:

Ինչպե՞ս կարող եմ օգտագործել այս փորձությունն Աստծուն ավելի մոտենալու համար:

Հաճախ օգտակար է սեփական խնդիրը քննարկել մյուս քրիստոնյաների հետ, քանի որ նրանց մեծ մասը հանդիպել են նմանատիպ փորձությունների: Ինչպե՞ս են նրանք սովորել հաղթահարել այս փորձությունը: Սուրբ Գրքի ո՞ր համարներն են նրանց ամենաշատն օգնել:

Երբ դու Սուրբ Գրքում գտնես համարներ, որոնք կօգնեն քեզ, արտագրի՛ր դրանք և անգի՛ր արա: Կրկնի՛ր այդ համարներն օրվա ընթացքում, հատկապես այն ժամանակ, երբ դու սովորաբար հանդիպում ես այդ փորձությանը:

4. Որոշո՛ւմ կայացրու քո կարիքներն Աստծո ասած ձևով բավարարելու համար:

Այն, որ դու արդեն գիտես քո կարիքները բավարարելու Աստծո ասած ձևը, դեռ չի կարող պատճառ լինել, որ սատանան դադարի քեզ փորձել: Նա կշարունակի քեզ դրդել, որ վարվես իր ասած՝ հեշտ ձևով: Եթե ուզում ես հաջողակ լինել

սատանայի փորձություններին դեմ կանգնելու հարցում, ուրեմն պետք է հաստատուն լինես քո որոշման մեջ, այն է՝ ամեն օր ավելի մոտենալ Աստծուն: Եթե դու որոշում կայացնես՝ շարունակ հետևելու Աստծո ասած ձևին, ապա ստիպված չես լինի ամեն փորձության համար մտածել. «Ո՞ր ճանապարհով ես պետք է գնամ՝ Աստծո՞ ճանապարհով, թե՞ հեշտ՝ սատանայի»:

Երբեմն սատանան կփորձի քեզ, որ բավարարես քո ունեցած ավելի պակաս կարևոր կարիքները: Երբ Հիսուն անապատում ծոմ էր պահում և աղոթում, քառասուն օր անց քաղց զգաց: Սատանան եկավ և փորձեց Նրան, որ քարը հաց դարձնի: Հիսուսը սոված էր, Նրա մարմինն ուտելիքի կարիք ուներ: Սա իրական կարիք էր: Սակայն Հիսուսը մերժեց հետևել սատանայի խորհրդին, քանի որ գիտեր՝ Աստված ուզում էր, որ Նա առաջինը ուրիշ կարիքներ հոգար (Տե՛ս Մատթեոս 4):

Շատ չանցած՝ Հիսուսը Մատթեոս 5-7-րդ գլուխներում քարոզում է Լեռան քարոզը: Մի կետում Նա խոսում է Աստծո առաջնահերթությունների մասին՝ մեր կարիքները բավարարելու հարցում:

Մատթեոս 6:31-33

«Ուրեմն, հոգ մի՛ արեք, ասելով՝ ի՞նչ պիտի ուտենք, կամ ի՞նչ պիտի խմենք, կամ ի՞նչ պիտի հագնենք, քանի որ հեթանոսներն են այդ ամենը խնդրում. իսկ ձեր երկնավոր Հայրը գիտի, որ այդ բոլոր բաները ձեզ պետք են: Բայց դուք նախ խնդրեցե՛ք Երկնքի թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ»:

Մենք կարող ենք վստահ լինել՝ Աստծո *կամքն* է այն, որ Նա հոգա մեր բոլոր կարիքները: Սակայն, հնարավոր է, տվյալ պահին չլինի Նրա *ժամանակը* որևէ կոնկրետ կարիք հոգալու համար: Հիսուսը, երբ անապատում էր, գիտեր, որ դեռ Աստծո ժամանակը չէ, որ Ինքը կերակրվի, թեև Նա սոված էր: Սատանան կփորձի քեզ մղել՝ քո ողջ ժամանակը վատնել քո կարիքները բավարարելու վրա, որից միայն դու ես օգտվում: Այս ձևով դու ո՛չ ժամանակ, ո՛չ էլ փող կունենաս՝ օգնելու քո շրջապատի մարդկանց, որպեսզի բավարարեն իրենց կարիքները:

Աստծո խոստումները հստակ են. Նա խոստացել է բավարարել քո բոլոր կարիքները: Սակայն երբեմն դժվար է հասկանալ՝ տվյալ բանը կարի՞ք է, թե՞ ցանկություն: Սատանան ամեն բան կանի քեզ համոզելու համար, որ դու կարիք ունես ինչ-որ բանի, երբ իրականում դա կապ ունի միայն քո ցանկություններից մեկի հետ:

Ե՛կ ավելի կոնկրետ դիտարկենք, թե ինչպես են մեր ցանկություններն առնչվում փորձություններին նախապատրաստվելու հետ:

Գ. Թո՛ւյլ տուր Աստծուն՝ որոշել, թե որ ցանկություններն են ճիշտ:

Սատանան շատ վաղուց է վարպետացել մարդկանց ցանկությունների հետ խաղալու մեջ՝ փորձելով նրանց, որպեսզի բավարարեն իրենց ցանկությունները: Նրա առաջին զոհը Եվան էր Եդեմի պարտեզում: Նա համոզեց Եվային, որ վերջինս նման կլինի Աստծուն, եթե ուտի այն ծառի պտղից, որ Աստված նրան արգելել էր: Եվան կարիք չուներ Աստծուն նման լինելու: Բայց մտածեց, որ հրաշալի բան կլինի. նա ուզում էր տեսնել դա: Ադամը շուտով միացավ նրան՝ ինքն էլ ուտելով նույն պտղից:

Երբ մենք բավարարում ենք մեր կարիքները սատանայի ասած ձևով, հետևանքները միշտ ցավալի են: Այն միշտ մեզ հեռացնում է Աստծուց, և հաճույքը, որ մենք ստանում ենք այդ ցանկությունը բավարարելուց, հաճախ կարճաժամկետ է: Արդյո՞ք մեր բոլոր ցանկությունները սխալ են: Պե՞տք է նորադարձ քրիստոնյաները նոր ցանկություններ զարգացնեն: Աստված ուզո՞ւմ է բավարարել մեր ցանկությունները: Ինչպե՞ս են մեր ցանկությունները համընկնում փորձություններին նախապատրաստվելու հետ:

1. Իմացի՛ր՝ ինչ է ուզում Աստված:

Աստված ուզում է, որ դու երջանիկ լինես: Նա ուզում է, որ դու վայելես կյանքը: Նա ուզում է, որ քո կյանքը լի և առատ լինի: Եթե որոշում ես կայացրել՝ հետևելու Քրիստոսին, ուրեմն պետք է քո մեջ զարգացնես նույն ցանկությունները, որ Նա ունի: Իմացի՛ր, թե ինչ է սիրում Աստված, և սովորի՛ր սիրել նույն բաները:

Ա Պետրոս 4:2

«Որպեսզի այսուհետև մարմնի մեջ մնացած ժամանակում ոչ թե մարդկային ցանկությունների համար ապրի, այլ՝ Աստծո կամքի»:

Սաղմոս 1:1-2

«Երանելի է այն մարդը, որն անաստվածների խորհրդով չի ընթանում, մեղավորների ճանապարհում չի կանգնում, ոչ էլ հեգնողների աթոռին նստում. այլ նրա հաճույքն Աստծո օրենքն է, և գիշեր-ցերեկ Նրա օրենքի մասին է խորհրդածում»:

Այս սաղմոսի երկրորդ համարը նկարագրում է այն քրիստոնյաների ապրելակերպը, ովքեր իրենց ցանկությունները դարձնում են Աստծո ցանկությունների նման: Նրանք հաճույք են զգում Աստծուն հնազանդվելու մեջ: Ինչպե՞ս կարող է նորադարձ քրիստոնյան իմանալ, թե ինչ է Աստված ուզում, որ ինքն անի: Համարի մյուս հատվածը բացատրում է, թե ինչպես. նրանք շարունակ խորհում են Աստծո օրենքների շուրջ և մտածում այն ճանապարհների մասին, որոնցով կարող են ավելի մոտենալ Աստծուն: Աստծո Խոսքի մեջ

ժամանակ անցկացնելով՝ դու կսովորես, թե ինչ է ուզում Աստված, որ անես: Դու կսովորես մտածել այնպես, ինչպես Աստված է մտածում:

Սաղմոս 37: 4-5

«Նաև Տիրոջով հրճվի՛ր, և Նա քեզ կտա սրտիդ փափագները: Տիրոջը հանձնի՛ր ճամփադ ու Նրան վստահի՛ր, և Նա կիրագործի այն»:

Եթե Աստծո մեջ երջանկություն ես փնտրում, նա կտա քեզ այն ամենը, ինչ դու փափագում ես: Սակայն եթե դու երջանկություն ես փնտրում աշխարհիկ բաների մեջ, Աստված այդ ցանկությունները չի բավարարի:

2. Ազատագրվի՛ր հին, մեղսալից ցանկություններից:

Նախքան քրիստոնյա դառնալը, հավանաբար, չես փորձել գտնել քո ցանկությունները բավարարելու Աստծո ասած ճանապարհը: Սատանայի ճանապարհներին հետևելով՝ դու, ամենայն հավանականությամբ, բռնվել ես այդ ցանկություններով: Օրինակ, այն պատանիները, ովքեր որոշում են թմրանյութ փորձել, հետագայում կախվածություն են ձեռք բերում դրանից: Եվս շատերը, ովքեր սկսում են ծխել՝ ցանկանալով իրենց ընկերների կողմից ընդունելություն գտնել, ավելի ուշ հայտնաբերում են, որ արդեն սովորություն են ձեռք բերել, որից ազատվելը ծայրահեղ դժվար է:

Կարող է նաև հետևյալը. քո ոչ վաղ անցյալում դու սովորել ես հաճույք ստանալ այնպիսի բաներից, որոնք, հիմա ես հասկանում, որ մեղք են: Աստված հստակորեն մեզ ասում է, որ պետք է մեր կյանքից հեռացնենք հին ցանկությունները:

Եփեսացիների 4:21-24

«Եթե դուք Նրա մասին լսեցիք և Նրանից սովորեցիք, ինչպես ճշմարտությունն է Հիսուսի մեջ, ապա ձեր վրայից հանե՛ք հին մարդուն՝ իր նախկին վարքով, որ խաբուսիկ ցանկություններով ապականված է. նորոգվե՛ք ձեր մտքի հոգով և նոր մարդուն հագե՛ք ձեր վրա, որ ստեղծված է Աստծո պատկերով՝ արդարությամբ և ճշմարիտ սրբությամբ»:

Կողոսացիների 3:5

«Ուստի սպանե՛ք ձեր երկրավոր անդամները՝ պոռնկությունը, պղծությունը, անսանձ կիրքը, չար ցանկությունը և ագահությունը, որ կռապաշտություն է»:

Այս երկու գրքերում էլ ներկայացված են մեղսալից ցանկությունների և սովորությունների ցուցակներ, որոնք մենք պետք է հեռացնենք մեր կյանքից: Տե՛ս Եփեսացիների 4:17-32 և Կողոսացիների 3:5-15:

Ժամանակ կպահանջվի, մինչև մեր որոշ հին ցանկություններ մեռնեն: Շատ անգամներ նորադարձ քրիստոնյաները պետք է իրո՛ք պայքարեն, նախքան դրանք

կհաղթահարվեն: Մի քրիստոնյա այսպես էր մեկնաբանում. «Երբեմն մտածում եմ, թե արդյո՞ք ես իրականում քրիստոնյա եմ: Ես իրականում ուզո՞ւմ եմ ծառայել Աստծուն: Ինչո՞ւ են, ուրեմն, այս հին ցանկություններն այդքան հրապուրիչ թվում: Ես Աստծուն ասել եմ, որ ուզում եմ թողնել իմ հին ապրելակերպը: Ինչո՞ւ Աստված ուղղակի չի հեռացնում այս հին ցանկությունները»:

Հին ցանկությունները հաղթահարելու հիմնական միջոցներից մեկը դրանք նոր ցանկություններով փոխարինելն է: Որոշ նորադարձ քրիստոնյաներ դժվարություններ են ունենում մի շարք հին ցանկությունների հետ այն պատճառով, որ պարզապես ուզում են ազատվել դրանցից՝ առանց դրանք գիտակցաբար փոխարինելու Աստծուն հաճելի ցանկություններով: Այսպես անելով դու դատարկ տարածություն ես ստեղծում քո ներսում: Դա քեզ հեշտ թիրախ է դարձնում սատանայի փորձությունների համար:

Բայց և այնպես, դու կարող ես ծրագրավորել, թե ինչ կանես, երբ սատանան փորձի քեզ մղել՝ բավարարելու քո հին ցանկություններից որևէ մեկը: Դու կարող ես օգտագործել յուրաքանչյուր փորձություն «զարթուցիչի» ձայնի պես, որը քեզ կհիշեցնի՝ աշխատել Աստծուն հաճելի ցանկություններ զարգացնելու վրա: Սա հակառակ աշխատանքը կլինի այն բանի, ինչ սատանան է անում: Երբ նա տեսնի, որ իր փորձությունները միայն օգնում են քեզ՝ ավելի լավ քրիստոնյա դառնալ, հնարավոր է՝ նա դադարեցնի այդ փորձությունը:

Սա գործի դնելու բանալին այն ծրագրավորումն է, թե ո՛ր նոր ցանկությունն է փոխարինելու հին ցանկությանը: Գտի՛ր Սուրբ Գրքից համարներ, որոնք վերաբերում են դրան, և անգի՛ր արա: Օրվա ընթացքում դրանք կրկնի՛ր՝ անկախ նրանից՝ սատանան քեզ այդ ասպարեզում փորձո՞ւմ է, թե՞ ոչ:

Դու կարող ես փոխել քո ցանկությունները: Դա հեշտ չի լինի: Սակայն հաստատուն որոշումը՝ հետևել Քրիստոսին, առաջին քայլն է այս ասպարեզում հաջողություն ունենալու համար:

3. Աստվածաշնչյան արժեքնե՛ր կիրառիր քո ցանկությունները գնահատելու համար:

Ի՞նչն է կյանքում քեզ համար իրոք կարևոր: Ի՞նչն ես դու բարձր գնահատում: Ինչի՞ն ես դու հավատում: Այս բոլորը միասին ձևավորում են քո արժեքները: Մենք բոլորս արժեքներ ունենք: Դրանցից որոշները կարող են աստվածաշնչյան լինել, մյուսները՝ մշակութային կամ մեղսալից: Նորադարձ քրիստոնյաները պետք է ժամանակ հատկացնեն՝ ստուգելու իրենց արժեքները: Սա հատկապես կարևոր է, երբ ուզում են ամուր քրիստոնեական ապրելակերպ զարգացնել:

Մենք կարող ենք օգտագործել մեր արժեքները՝ գնահատելու համար մեր ցանկությունները: Որոշ մարդիկ մեծ արժեք են տալիս ուտելուն և դա նախընտրում են ուրիշ բաներից: Երբ նրանք նստում են ուտելու, նրանց ցանկությունները ղեկավարում են նրանց ուտելու սովորությունները:

Նա, ով ավելի քիչ է արժևորում սնունդը այլ բաների համեմատ, կարող է հեշտությամբ կառավարել իր ուտելու ցանկությունները:

Մի անգամ Հիսուսն Իր աշակերտների հետ միասին ճանապարհորդում էր Սամարիայի միջով: Նրանք կանգ առան մի քաղաքի մոտ, և 12 աշակերտները գնացին ուտելիք առնելու: Գրեթե կեսօր էր, և այդ քաղաքից մի կին եկավ ջուր տանելու: Հիսուսը խոսակցություն սկսեց նրա հետ, որը շուտով վերածվեց հոգևոր իրավիճակի քննարկման: Երբ աշակերտները վերադարձան, ցանկացան, որ Հիսուսն օգտվեր իրենց բերած ուտելիքից: Սակայն Նա պատասխանեց. «Ես կերակուր ունեմ ուտելու, որ դուք չգիտեք… Իմ կերակուրն այն է, որ Ես ինձ ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ» (Հովհաննես 4:32, 34):

Հիսուսը կարողանում էր Իր ուշադրությունը շեղել սեփական կարիքներից ու ցանկություններից, երբ Նա ամբողջությամբ ձեռնամուխ էր լինում մարդկանց օգնելու գործին: Եթե դու դժվարություններ ես ունենում հին ցանկությունները հաղթահարելու հարցում, նայի՛ր, թե ինչքան ժամանակ ես հատկացնում մարդկանց օգնելուն: Եթե ավելի քիչ ուշադրություն դարձնես քո եսասիրական կարիքներին ու ցանկություններին, ավելի հեշտությամբ կկարողանաս անցնել այն բաների միջով, որոնք վերջին շրջանում տիրել էին քեզ:

Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ինչքանո՞վ է, ըստ Աստծո տեսակետի, կարևոր, որ ես այսօր բավարարում եմ իմ այս ցանկությունը»: Երբ մենք սկսում ենք իրերին նայել Աստծո տեսակետից, ավելի հեշտ ենք հասկանում, թե որ ցանկություններն արժե բավարարել, իսկ որոնք՝ մերժել:

Կարևոր չէ, թե որքան ժամանակ ես դու հատկացնում փորձություններին նախապատրաստվելու համար, սատանան, միևնույն է, կփորձի քեզ մեղքի մեջ գցել: Սակայն ինչքան լավ նախապատրաստված լինես, այնքան հաջողակ կլինես դրանք հաղթահարելու հարցում:

Դ. Որոշ փորձություններ կարող են կանխարգելվել:

Թե ի՛նչ ես դու մտածում և ինչի՛ վրա ես ծախսում քո ժամանակը, կարող է մեծ ազդեցություն ունենալ փորձությունների հանդիպելու ժամանակ: Ուզո՞ւմ ես ապրել ազատության մեջ: Իրական ազատությունը չի նշանակում ազատություն՝ ցանկացածն անելու: Իրական ազատությունը նշանակում է ունենալ զորություն՝ ճիշտ բաներն ընտրելու: Այդ զորությունը գալիս է քո ներսից, և եթե դա չունես, Աստված պատրաստ է քեզ տալ անհրաժեշտ զորությունը:

Ահա՛ քո անելիք մի քանի քայլեր, որոնք կարող են կանգնեցնել անգամ կոնկրետ ասպարեզում քեզ մեղքի մեջ գցելու փորձ անող սատանային:

1. Խուսափի՛ր այն բաներից, որոնք դու գիտես, որ մեղք են:

Առաջին Թեսաղոնիկեցիների 5:22. «Չարի ամեն մի երևույթից հեռո՛ւ մնացեք»: Սա կարող է լավագույնը լինել՝ խուսափելու համար բազմաթիվ փորձություններից: Դու կարիք չունես ապացուցելու սատանային, որ կարող ես անցնել մեղքի կողքով և չվնասվել: Եթե ժամանակին խնդիր ես ունեցել կրքերի հետ, ուրեմն մի՛ մոտեցիր այն կրպակներին, որոնք պոռնոգրաֆիական ամսագրեր և գրքեր են վաճառում: Եթե խնդիր ես ունեցել թմրանյութերի հետ, ուրեմն հեռո՛ւ մնա այն մարդկանցից, ովքեր թմրանյութ ունեն:

Բ Տիմոթեոս 2:22

«Երիտասարդական ցանկություններից փախի՛ր ու գնա՛ արդարության, հավատի, սիրո, խաղաղության հետևից՝ նրանց հետ, ովքեր Տիրոջ անունը կանչում են մաքուր սրտով»:

Կան բազմաթիվ փորձություններ, որոնք կարող են կանխվել այդ խնդիրներից հեռու մնալով: Սակայն նույնը չես կարող անել բոլոր փորձությունների հետ: Եթե քո քաշը չափից ավելի է, և դու շատ ուտելու փորձության մեջ ես, լուծումը քո մնացած ամբողջ կյանքում ուտելիքից հեռու մնալը չէ, եթե, իհա՛րկե, չես ուզում կարճ կյանք ունենալ: Կան փորձություններ, որոնցից մենք չենք կարող խուսափել: Մենք պետք է սովորենք դեմ կանգնել այդ փորձություններին, երբ դրանք գալիս են:

2. Կարգավորի՛ր քո մտավոր կյանքը:

Առակաց 23:7-ն ասում է, որ մարդն այնպիսին է, ինչպես որ մտածում է: Եթե դու քո գլուխը լցնում ես մեղսալից բաների վերաբերյալ մտքերով, ապա սատանան շատ հեշտությամբ կարող է դրանք դարձնել մեղքի փորձություններ: Եթե դու քո գլուխը լցնում ես ոչ-քրիստոնեական հեռուստածրագրերով, դա կազդի քո ապրելակերպի վրա:

Կողոսացիների 3:1-ը ցուցում է տալիս՝ մեր մտքերն ուղղել Աստծուն վերաբերող բաներին և Նրա համար ապրելուն՝ աշխարհի մեղսալից բաների մասին մտածելու փոխարեն: Երբ զգում ես, որ միտքդ հետ է գնում քո անցյալ մեղսալից ապրելակերպին, պետք է ինքդ քեզ կանգնեցնես և ստիպես մտածել այլ բաների մասին: Փիլիպպեցիների 4:8-ը մի ամբողջ ցուցակ է տալիս այն գործողությունների, որոնց շուրջ քրիստոնյաները կարող են մտածել:

3. Արագ հնազանդվի՛ր Աստծուն, երբ Նա խոսում է քեզ հետ:

Երբ Սուրբ Հոգին խոսում է քեզ հետ քո խղճի միջոցով կամ այլ կերպ, դու պետք է արագ հնազանդվես Նրան: Եթե դա ուշացնում ես, դու սատանային հնարավորություն ես տալիս քեզ փորձելու և իրավիճակի վերաբերյալ իր տեսակետը ներկայացնելու: Եթե արագ հնազանդվես Աստծուն, սատանան

հնարավորություն չի ունենա քեզ շփոթեցնելու: Երբ Սուրբ Հոգին խոսում է քեզ հետ, Նա միշտ պատասխան է ակնկալում քեզնից:

4. Ժամանա՛կ անցկացրու քրիստոնյաների հետ:

Մարդիկ, որոնց հետ դու ժամանակ ես անցկացնում, սովորաբար ազդում են քեզ վրա: Եթե քո ժամանակն անցկացնես քրիստոնյաների հետ, կարող ես նկատել, որ ավելի քիչ փորձությունների ես հանդիպում, քան եթե ողջ ժամանակդ անցկացնես ոչ-քրիստոնյաների հետ: Դու կարող ես բազմաթիվ փորձություններ կանխել՝ քո կապը կտրելով այն մարդկանց հետ, ովքեր փորձում են քեզ ներքաշել իրենց մեղսալից գործունեության մեջ:

Դու կարիք ունես միանալու որևէ տեղական եկեղեցու և պարբերաբար մասնակցելու նրա գործունեությանը: Քրիստոնյաների հետ միանալը գերազանց միջոց է հանդիսանում Աստծուն ավելի մոտենալու համար: Սակայն քրիստոնյաների հետ ժամանակ անցկացնելը միշտ չէ, որ կկանգնեցնի սատանային, որ չկարողանա քեզ փորձել: Մի՛ զարմացիր, եթե անգամ եկեղեցում լինելով՝ սատանան փորձություններ բերի քո մտքի մեջ:

5. Հաստատո՛ւն եղիր փորձություններին դիմակայելու մեջ:

Շատ մարդիկ կան, որոնց հանդեպ սատանան գիտի, որ չի կարողանա հաջողության հասնել, երբ առաջին կամ երկրորդ անգամ փորձության ենթարկի: Բայց նա նաև գիտի, որ եթե համառորեն կրկնի, նրանք կզիջեն: Փորձությունները կանխարգելելու ձևերից մեկն էլ հաստատակամորեն դրանց դեմ կանգնելն է: Եթե դու քո ապրելակերպով կարողանաս ցույց տալ, որ կարող ես դեմ կանգնել կոնկրետ փորձությանն ամեն անգամ, երբ այն գա, սատանան մի որոշ ժամանակ, հավանաբար, կանգ կառնի այդ ասպարեզում:

6. Համոզվա՛ծ եղիր, որ Աստված քո կյանքի իրական առաջնորդն է:

Շատ քրիստոնյաների համար հեշտ է եկեղեցում աղոթել և ասել Աստծուն, որ ուզում են՝ Աստված ղեկավարի իրենց կյանքը: Եվ շաբաթվա ընթացքում նույնքան հեշտ է մոռանալ այդ աղոթքը և ամեն բան մեր ձեռքը վերցնել: Գաղատացիների 5:16-ը մի քանի հստակ խորհուրդներ է տալիս, թե ինչպես կարող ենք կանխարգելել որոշ փորձություններ:

Գաղատացիների 5:16

«Ուստի ձեզ ասում եմ. Հոգով գնացե՛ք, և մարմնավորի ցանկությունը չեք կատարի»:

Բոլոր քրիստոնյաները կունենան մեղքի փորձություններ, սակայն Աստծո օգնությամբ կկարողանան հաջողությամբ հաղթահարել դրանք: Աստված մեզ խոստացել է զորություն և իմաստություն տալ: Մենք պետք է առաջնորդվենք Նրա խոստումներով և մոտենանք Նրան:

Ե. Իմացի՛ր սատանայի ռազմավարությունը:

Հիսուսը մեծ փորձությունների հանդիպեց, երբ հենց նոր էր սկսում Իր հրապարակային ծառայությունը: Երբ Նա 40-օրյա ծոմապահության մեջ էր, սատանան մի քանի անգամ փորձեց Նրան: Միգուցե դու ցանկանաս նայել Ղուկաս 4:1-14 հատվածը, որը պատմում է այդ փորձությունների մասին:

Ուշադի՛ր նայիր, թե ինչպես սատանան փորձեց Հիսուսին: Նա անգամ Սուրբ Գրքից մեջբերումներ արեց Հիսուսի համար: Քո կյանքում դու նույնպես կարող ես հանդիպել նմանատիպ փորձությունների, երբ առաջարկը կարող է աստվածաշնչյան թվալ:

Բ Կորնթացիների 11:14

«Եվ զարմանալի էլ չէ, որովհետև սատանան ինքն էլ կերպարանափոխվում է լույսի հրեշտակի նման»:

Մենք պետք է զգուշորեն ստուգենք այն մտքերը, որոնք գալիս են մեր գլխի մեջ, որպեսզի տեսնենք, թե դրանք իրո՞ք Աստծո ճշմարտություններ են, թե՞ պարզապես մեղքի փորձություն է՝ հոգևոր արտաքինով փաթեթավորված:

Սատանայի մեկ այլ ռազմավարություն երևում է այն բանից, թե ինչպես էր նա փորձում Հիսուսին: Երբ սատանան դադարի քեզ փորձել քո կյանքի որևէ ասպարեզում, դա կարող է քեզ մոտ տպավորություն ստեղծել, որ դու այլևս կարիք չունես անհանգստանալու այդ ասպարեզի վերաբերյալ:

Ղուկաս 4:13

«Եվ երբ սատանան վերջացրեց բոլոր փորձությունները, միառժամանակ հեռացավ Նրանից»:

Դու պետք է հասկանաս, որ հեռանալով նա սպասում է մեկ այլ հնարավորության: Մի քանի շաբաթ կամ ամիս անց դու կզգաս, որ կրկին մեծ փորձության ես հանդիպել այդ նույն ասպարեզում: Հնարավոր է՝ մտածես. «Արդյո՞ք սա նշանակում է, որ ես հետ եմ գնացել: Ի՞նչն եմ սխալ արել, որ նորից հանդիպում եմ նույն փորձությանը: Միգուցե Հիսուսի մասին այս գիտելիքներն այլևս արդյունավետ չեն իմ կյանքում»:

Դու պետք է իմանաս, որ բնական է, երբ փորձություն ես կրում մի ասպարեզում, որտեղ նախկինում կամ երկար ժամանակ փորձության չես ենթարկվել: Սա պարզապես նշանակում է, որ սատանան հարմար պահ է տեսնում, երբ դու հսկողությունդ թուլացնում ես, կամ անցնում ես դժվար ժամանակներով:

Դու չպետք է ապրես վախի մեջ, որ փորձությունները կարող են նորից հետ գալ, սակայն նաև չպետք է անակնկալի գաս, երբ դրանք տեղի ունենան:

Եթե տեսնես, որ փորձությունների հեղեղ է գալիս դեպի քեզ, ուրեմն՝ ժամանակն է գործի դնել այն միջոցները, որոնք սովորել ես այդ փորձություններին դիմագրավելու համար:

Այս թեմայի վերաբերյալ մեկ այլ համար է Ա Կորնթացիների 10:13-ը, որն ասում է՝ Աստված ավելի շատ փորձություն թույլ չի տա, քան դու կարող ես կրել Նրա օգնությամբ:

Գլուխ 4.
Հասկանալ Աստծո տեսակետը ձախողման և վերականգնման հարցում

Աստված չի կամենում, որ դու մեղք գործես: Նա քեզ տվել է զորություն՝ դեմ կանգնելու և հաղթահարելու քեզ հանդիպող ցանկացած փորձություն: Բայց և այնպես, դու, հնարավոր է՝ ոչ միշտ ընտրես փորձություններ անցնելու Աստծո ասած ձևը, և ընկնես: Սա իրականություն է: Սակայն Աստված ողորմած է և կների քեզ, երբ դու Նրան խոստովանես քո ձախողումը:

Աշխարհի մեծագույն մոլորեցնողը սատանան է: Երբեմն նա այնքան գրավիչ է դարձնում փորձությունը, որ դժվար է լինում դիմակայել: Սակայն միտքն արթուն պահելը և մեղքի հետևանքների մասին տեղյակ լինելը կարող է քեզ օգնել՝ ամուր պահել քո հիմքը:

Ա. Ի՞նչ է լինում, երբ զիջում ես փորձությանը:

Մի րոպե փորձի՛ր հիշել մի դեպք, երբ դու զիջել ես սատանայի փորձությանը: Ի՞նչ եղավ դրանից հետո: Հետևանքներն ա՞յն էին, ինչ դու ակնկալում էիր: Մենք հիմա կանդրադառնանք մի քանի դեպքերի, որոնք տեղի են ունենում, երբ զիջում ես սատանայի փորձությանը: Այս հետևանքները միշտ չէ, որ միանգամից են հետևում, երբ ամեն անգամ դու չես ընտրում Աստծո ճանապարհը: Քեզ համար օգտակար կլինի այս հետևանքների մասին մտածելը, երբ դու մեղքի փորձության մեջ լինես: Դա կարող է քեզ օգնել համոզվելու, որ հետևես Աստծո ճանապարհին՝ քո կարիքներն ու ցանկությունները բավարարելու համար:

1. Դու մեղք ես գործում:

Ամեն անգամ, երբ դու զիջում ես սատանայի փորձությանը, խախտում ես Աստծո օրենքներից մեկը: Հակոբոսը նկարագրում է առաջինը մտքին եկածին լսելու հետևանքները:

Հակոբոս 1:14-16

«Սակայն յուրաքանչյուրը փորձվում է իր ցանկություններից հրապուրվելով և խաբվելով: Այնուհետև ցանկությունը հղանալով՝ մեղք է ծնում, և կատարված մեղքը մահ է ծնում: Մի՛ խաբվեք, իմ սիրելի՛ եղբայրներ»:

Սատանան կփորձի այնպես անել, որ դու մոռանաս, որ նրա ճանապարհին հետևելը տանում է մեղքի: Բայց ինչպես 16-րդ համարն է ասում՝ մի՛ թույլ տուր սատանային խաբել քեզ:

Եթե անգամ մեղք գործեցիր, ապա խոստովանի՛ր Աստծուն և փնտրի՛ր Նրա ներողամտությունը:

2. Դու վնասում ես քեզ և մյուսներին:

Սատանան կփորձի քեզ համոզել, որ միայն լավ բաներ տեղի կունենան, երբ դու զիջես նրա փորձությանը: Մի՛ հավատա նրան: Մեղքը միշտ իր հատուցումն ունի. «Որովհետև մեղքի վարձը մահ է, բայց Աստծո պարգևը հավիտենական կյանք է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռոմեացիների 6:23):

Մեղք գործելն ազդում է քեզ վրա, սակայն դա նաև ազդում է մյուսների վրա երբեմն շատ ավելի խորը, քան դու կարող ես պատկերացնել: Հնարավոր է՝ դու դա անմիջապես չտեսնես, սակայն ժամանակը ցույց կտա դրա վնասները:

Հին Կտակարանում Դավթի մեղքը Բերսաբեի հետ ավերիչ հետևանքներ ունեցավ: Նա սկզբում շնություն գործեց, իսկ հետո սպանեց Բերսաբեի ամուսնուն, որպեսզի թաքցնի իր մեղքը: Ավելի ուշ, երբ նրա մեղքը բացահայտվեց, Աստված նրան պատժեց՝ վերցնելով այդ մեղքի հետևանքով ծնված երեխայի կյանքը: Աստծո պատիժն իր հետևանքներն ունեցավ նաև Դավթի ապագա սերունդների վրա: Մանրամասների համար տե՛ս Բ Թագավորաց 12:10-12: Իհա՛րկե, Դավիթը չէր մտածում այս բոլոր ցավալի հետևանքների մասին, երբ Բերսաբեի հետ ընկավ մեղքի փորձության մեջ:

3. Դու քո կարիքը կբավարարես ժամանակավոր, սակայն ոչ երբեք մշտական:

Սատանայի արագ լուծումները երբեք մշտական լուծումներ չեն քո կյանքի կարիքների համար: Քո կյանքում ճշմարիտ բավարարվածություն գտնելու միակ ձևը Աստծո ասած ձևով այն կատարելու մեջ է: Սատանան միշտ կփորձի քեզ մտածել տալ իր ասած ձևով անելուց անմիջապես եկող օգուտների մասին: Նա չի ուզում, որ դու մտածես, թե ինչքան երկարատև կլինի նրա լուծումը:

4. Սատանայի ասած ձևին հետևելը ավելացնում է կարիքը և խորացնում է ցանկությունը:

Քո եսասիրական բավարարվածությունը համտեսելուց անմիջապես հետո դու, հավանաբար, ավելի մեծ ցանկություն կունենաս այդ հաճույքը վայելելու: Երջանկությունը, որ դու զգում ես, կարող է կարճ տևել: Երբ ժամանակավոր հաճույքը վերանում է, կարիքը կամ ցանկությունը դեռևս մնում է, սակայն շատ ավելի մեծ:

5. Մեկ անգամ զիջելը քեզ կտանի ավելի մեծ հուսահատության:

Դու ունես կարիք, և ուզում ես այն բավարարված տեսնել: Աստծո տեսակետից, թվում է, թե ոչ մի բան չի պատահի: Սակայն սատանան փորձում է քեզ այնպես, որ դու զիջում ես հուսահատությանը և փորձում ես բավարարել քո կարիքը նրա ասած ձևով: Բայց շուտով կարիքը վերադառնում է, և հուսահատությունը՝ նույնպես: Քանի որ քո կյանքի կարիքը համապատասխան ձևով չի բավարարվել, հուսահատությունը շարունակում է աճել:

6. Մի անգամ զիջելը հեշտացնում է հաջորդ զիջելը:

«Առաջին անգամը միշտ ամենադժվարն է: Մյուս անգամ դա քեզ ավելի դուր կգա»: Եթե սատանան այս միտքը օգտագործել է քո հանդեպ, նշանակում է նա ծրագրավորում է այս ասպարեզում քեզ նորից փորձել:

Եթե նրան հաջողվի երկրորդ և երրորդ անգամ, նա կփորձի քեզ համոզել՝ մոռանալ քրիստոնյա լինելու մասին: «Տե՛ս, քեզ համար չափից ավելի դժվար է քրիստոնյա լինելը: Նայի՛ր ինքդ քեզ. այս շաբաթ դու արդեն երրորդ անգամ ես մեղք գործում»: Նա ինչ կկարողանա կանի, որպեսզի դու հույսդ կորցնես: Երբ հույսը կորչում է, շատ հեշտ է պարզապես ամեն բան թողնել և անգամ չփորձել դիմադրել փորձությանը, երբ այն նորից գա:

7. Մի փորձությանը զիջելը քեզ ավելի մեծ փորձությունների կտանի:

Բազմիցս սատանան կօգտագործի հետևյալ փաստարկը. «Սա այնքան փոքր բան է: Առա՛ջ գնա և արա՛: Դա ոչ ոքի չի վնասի»: Եթե դու փոքր բաների մեջ զիջես, նա շուտով կվերադառնա ավելի մեծ փորձություններով: Սատանան նաև քեզ օգնելու «հրաշալի» ծրագիր ունի, որպեսզի թաքցնես քո գործած մեղքերը: Սակայն թաքցնելու նրա ծրագիրը սովորաբար իր մեջ ներառում է մեկ այլ մեղք՝ շատ ավելի վատ հետևանքներով:

Դավթի ողբերգական պատմությունը և մեղքը Բերսաբեի հետ դրա պարզ օրինակն է (Բ Թագավորաց 11 և 12): Դավթի առաջին փորձությունն իր մտքում կրքով բորբոքվելն էր: Այնուհետև նա մարդ ուղարկեց՝ Բերսաբեին իր պալատ կանչելու: Նա շնություն գործեց, և Բերսաբեն հղիացավ: Երբ Դավիթը սա իմացավ, փորձեց իր մեղքը թաքցնել՝ պատերազմից կանչելով Բերսաբեի ամուսնուն:

Երբ մեղքը թաքցնելու Դավթի ծրագիրը չհաջողվեց, նա կազմակերպեց Ուրիայի սպանությունը: Ծրագրի այդ մասը փայլուն ձևով գործեց, մինչև եկավ Նաթան մարգարեն և ամեն բան բացահայտվեց: Մի մեղքը տարավ մեկ այլ մեղքի, մինչև որ նա այնպես կապանքվեց մեղքով, որ դրանից դուրս գալու այլ ճանապարհ չկար:

Երբ դու զիջում ես մի փորձության, ցույց ես տալիս այն զորությունը, որ մեղքն ունի քո կյանքում: Սակայն մեղքը մեզ բերում է երևակայական պատկերներ, և մենք հաճախ չենք կարողանում տեսնել այդ մեղքի զորությունը մեր կյանքում:

Այս երևակայական պատկերները մեր մեջ տպավորություն են ստեղծում, որ փորձությանը զիջելն անվնաս է և հեշտացնում են հաջորդ փորձությանը զիջելը:

Եթե մենք ցանկանում ենք կոտրել մեղքի զորությունը մեր կյանքում, պետք է սկսենք Աստծո ճշմարտությամբ և յուրաքանչյուր փորձության նայենք Աստծո տեսակետից: Աստված ատում է մեղքը, և մենք էլ նույնը պետք է անենք:

8. Քո անկումը կարող է հեշտացնել մյուսների ընկնելը նույն մեղքի մեջ:

Գագիկն արդեն երեք շաբաթ է՝ ճշմարիտ քրիստոնյա է դարձել: Նա իրոք տառապում է՝ աշխատելով թողնել ծխելու սովորությունը: Թին Չելենջ կենտրոնի կանոնները նրան մի փոքր օգնում են, քանի որ ծխելն արգելված է: Սակայն երեկ գիշեր Գագիկը գրեթե պատրաստ էր զիջել ծխելու փորձությանը: Կենտրոնում ինչ-որ մեկը գետնից ծխախոտ էր գտել և նկուղում ծխում էր: Ծխախոտի ծանոթ ծուխը շատ ավելի դժվար էր դարձնում Գագիկի վիճակը, որ իրեն զսպի՝ սատանայի փորձությանը դիմանալու համար:

Մյուս անձնավորությունը, ի՛նչ-խոսք, մտադիր չէր Գագիկին վնասել: Նա Գագիկին չէր կանչել իր հետ միասին ծխելու: Ուղղակի մտածում էր, որ նկուղ սողոսկելով և ծխախոտը միայնակ ծխելով՝ ոչ ոքի վրա չէր ազդի:

Երբ դու զիջում ես փորձությանը, մյուսներն էլ կազդվեն քո մեղքից: Մենք բոլորս պատասխանատվություն ունենք մաքուր կյանք ապրելու: Հիսուսը բավականին խիստ խոսեց այն մարդու հասցեին, որի գործողությունները գայթակղում են մյուսներին՝ մեղք գործելու:

Ղուկաս 17:1-3ա

«Այն ժամանակ ասաց աշակերտներին. «Գայթակղություններ անպայման պիտի գան, բայց վա՜յ նրան, ում ձեռքով կգան: Նրա համար ավելի լավ կլիներ,

որ ջրաղացի քար կախվեր իր վզից և ծովը գցվեր, քան թե այս փոքրիկներից մեկին գայթակղեցներ: Զգուշացե՛ք ձեր անձերի համար»:

Առաջին մարդը, ով զիջեց մեղքի փորձությանը՝ Եվան՝ Եդեմի պարտեզում, ընկավ այս թակարդը: Հենց որ նա մեղք գործեց, գնաց և կանչեց Ադամին՝ իր հետ միասին ուտելու պտուղը: Երբ մյուսները տեսնում են քեզ մեղք գործելիս, նրանք ավելի հեշտությամբ են ընդունում այն միտքը, որ իրենց համար էլ նորմալ է նույն բանն անել:

9. Զիջելը տանում է ինքնաարդարացման:

Երբ դու զիջում ես մեղքի փորձությանը, սատանան պատրաստ է և պատրաստակամ քեզ օգնելու՝ պատճառաբանելու համար քո գործողությունները: Նա քեզ բազմաթիվ պատճառաբանություններ կտա, թե ինչու էին քո գործողությունները նորմալ: Նա քեզ ցույց կտա, թե ինչու է տվյալ իրավիճակն Աստծո կանոններից բացառություն հանդիսանում: Սատանան կաղավաղի ճշմարտությունը և կմղի քեզ՝ ընդունելու այն միտքը, որ քո արածը մեղք չէր: Նա ամեն բան կանի, որպեսզի քեզ վերադարձնի մեղքի կախվածությանը:

Երբ դու զիջես փորձությանն ու մեղք գործես, Սուրբ Հոգին կհանդիմանի քեզ. Նա կխոսի քեզ հետ քո սրտի կամ խղճմտանքի մեջ: Սա հաճախ կուղեկցվի հանցանքի զգացողությամբ: Բայց եթե դու չլսես, թե ինչ է Աստված խոսում քեզ հետ քո սրտի մեջ, դու կարող ես ընկնել մեծ խնդիրների մեջ: Դու կարող ես ինքդ քեզ խաբել՝ հավատալով, որ այդ մեղսալից գործողությունների մեջ ներգրավվելը նորմալ է:

Եթե շարունակես անտեսել այն, ինչ Աստված խոսում է քեզ հետ քո սրտի մեջ, դու կարող ես «խստացնել քո սիրտը»: Քո մեղքերը պատճառաբելը քեզ տանում է նրան, որ հավատաս սեփական երևակայական պատկերներիդ և այլևս չլսես Աստծուն, երբ Նա խոսի քո սրտի հետ:

Հին Կտակարանում Դավիթ թագավորն այս սխալ ուղին ընտրեց Բերսաբեի հետ մեղք գործելիս: Տե՛ս Բ Թագավորաց 11 և 12: Դավթի առաջին մեղքը նրան տարավ այն բանին, որ նա կազմակերպեց Բերսաբեի ամուսնու մահը: Ինն ամիս անց Նաթանը՝ Աստծո մարգարեներից մեկը, բացահայտեց նրա մեղքը: Վերջնական արդյունքում Դավիթն ապաշխարեց: Նրա ապաշխարության աղոթքը 51-րդ սաղմոսն է:

10. Հնարավոր է՝ դու հանցավորության զգացողություն ունենաս:

Երբ մենք մեղք ենք գործում, Աստված հանդիմանում է մեզ: Սակայն երբեմն Նրան չենք լսում, քանի որ գնում ենք մեր ճանապարհով՝ Նրան լսելու փոխարեն: Եթե դու զիջես փորձությանը, Սուրբ Հոգին քեզ տեղյակ կպահի քո մեղքի մասին: Շատ անգամ հանցանքի այս զգացողությունը գալիս է անմիջապես այն բանից

հետո, երբ մենք բավարարում ենք մեր կարիքը սատանայի ասած ձևով: Դու թեթևություն ես զգում այն լարվածությունից և նեղվածությունից, որ տվյալ կարիքն առաջացրել էր: Միտքդ լիցքաթափվելուց հետո միայն դու ի վիճակի ես լինում գնահատել քո իրավիճակը և հասկանալ, թե ինչ է իրականում տեղի ունեցել: Եթե զգայուն ես, Աստված մեղքի հանդիմանության միջոցով կհստակեցնի, որ դու սխալվել ես:

Սակայն մի՛ ընկիր թակարդի մեջ՝ միշտ քո զգացմունքներով կողմնորոշվելով, թե ո՛րն է ճիշտ և ո՛րն է սխալ: Ինչ-որ մեկը կարող է ասել. «Ես սա անելով ինձ հանցավոր չեմ զգում, ուրեմն, առաջ կգնամ և կանեմ դա»: Այդ մարդը երևի այնքան հաճախ է դա արել, որ նրա խղճմտանքն այլևս ազդակներ չի ուղարկում: Սակայն Աստծո օրենքները հստակ շարադրված են Աստվածաշնչում: Քո զգացողությունն Աստծո օրենքների հանդեպ դրանք ճիշտ կամ սխալ չեն դարձնում: Եթե Աստված ասում է, որ մի բան մեղք է, ուրեմն մենք պետք է համաձայնվենք Նրա հետ՝ անկախ նրանից, թե ինչ զգացողություն ենք ունենում դրա վերաբերյալ:

Եթե դու զիջես սատանայի փորձություններից մեկին, կարևոր է, որ խոստովանես քո մեղքը՝ անկախ նրանից, հանցանք զգու՞մ ես, թե՞ ոչ: Երբ սովորես զգայուն լինել Աստծո հանդեպ, դու էլ կսկսես զգալ նույնը, ինչ Աստված է զգում:

11. Աստված կգա քեզ փնտրելու:

Եթե դու մեղք գործես, Աստված մեջքով չի շրջվի դեպի քեզ: Նա սիրում է քեզ և ուզում է օգնել՝ գտնելու իրական բավարարվածություն կյանքում: Նա ուզում է քեզ օգնել՝ հետ գալու կյանքի ճիշտ ուղուն: Քանի որ Աստված քեզ շատ է սիրում, Նա ներում է քեզ:

Եդեմի պարտեզում, երբ Ադամն ու Եվան մեղք գործեցին, Աստված եկավ նրանց փնտրելու: Նա նույնն անում է նաև մեզ համար:

Մենք պետք է զգույշ լինենք, որ չչահագործենք Աստծո սերը: Եթե մենք իսկապես սիրենք Նրան, կհնազանդվենք Նրան: Մի՛ ընկիր թակարդը՝ մեղք գործելու, իսկ հետո ասելու. «Ամեն բան կարգին է. Աստված միշտ ներում է ինձ, երբ ես աղոթում եմ»: Ամեն անգամ, երբ դու մեղք ես գործում, մի ճանապարհ ես բռնում, որը քեզ հեռացնում է Աստծուց: Այսպիսի վերաբերմունքը դժվարացնում է Աստծո զգուշացնող ձայնը լսելը: Սատանայի փորձություններին լսելը շատ ավելի հեշտ է դառնում:

12. Քո վերաբերմունքն Աստծո հանդեպ կարող է փոխվել:

Որոշ մարդիկ մեղք գործելուց հետո վախի մեջ են ընկնում Աստծո հանդեպ: Նրանք ակնկալում են, որ Աստված կբարկանա և կպատժի իրենց, և փորձում են թաքնվել Աստծուց: Եթե դու փորձել ես սա անել, ապա արդեն գիտես, որ չի գործում: Մենք չենք կարող թաքնվել Աստծուց:

Եթե իրոք զղջում ես քո գործած մեղքի համար, ապա կարիք չունես Աստծուց վախենալու: Նա բարկացած Աստված չէ, ով սպասում է հարմար առիթի՝ քեզ ոչնչացնելու: Նա սիրում է քեզ և տխրում է, երբ դու մեղք ես գործում:

Բ. Ինչո՞ւ են մարդիկ զիջում փորձությանը:

Երբ էլ որ դու զիջելու լինես փորձությանը, քո մեղքի համար չես կարող մեղադրել որևէ մեկին՝ քեզնից բացի: Դա Աստծո կամ սատանայի սխալը չէ: Մեզնից ամեն մեկը պատասխանատու է իր ընդունած որոշումների համար: Դիտարկենք մի քանի պատճառներ, թե ինչո՛ւ ես դու զիջում փորձությանը:

1. Դու չես նախապատրաստվել փորձությանը:

Աստված Ա Կորնթացիների 10:13-ում խոստացել է, որ ամեն անգամ, երբ մենք փորձության մեջ լինենք, Նա մեզ ազատության միջոց կտա: Փորձություններին կարելի է դեմ կանգնել, եթե դու նախապատրաստվել ես աղոթքին, Աստվածաշնչի ուսումնասիրությանը և Աստծուն մոտենալուն:

Որոշ քրիստոնյաներ շատ թույլ են փորձություններին դեմ կանգնելու հարցում: Սա Աստծո սխալը չէ: Նա քեզ ապահովել է պետք եղած ողջ զորությամբ: Սակայն եթե դու անտեսել ես Աստծո հետ քո հաղորդակցությունը և հոգևորապես թուլացել ես, մեղք գործելը քեզ համար շատ ավելի հեշտ է:

Հիսուսը պատրաստ էր ցանկացած փորձության, որ սատանան բերում էր Նրա դեմ: Նա գիտեր, թե ինչպես գնահատեր և կողմնորոշվեր, թե որ կարիքը կամ ցանկությունն է սատանան փորձում Նրան մղել, որ բավարարի: Դու նույնպես կարող ես հաջողակ լինել, եթե ժամանակ հատկացնես՝ նախապատրաստվելու փորձություններին:

2. Դու փորձում ես քրիստոնեական կյանք ապրել սեփական ուժերով:

Եթե դու փորձես քրիստոնեական կյանք ապրել առանց Աստծո օգնության, կարող ես վստահ լինել, որ դժվարությունները շատ հեռու չեն: Անհնար է սեփական ուժերով դեմ կանգնել սատանայի բոլոր փորձություններին:

Որոշ մարդիկ վստահ չեն, թե արդյոք ուզո՞ւմ են քրիստոնյա լինել: Նրանք տակավին փորձում են քայլել ցանկապատի վրայով և ունենալ երկու կողմերի լավագույնը: Խնդիրն այն է, որ դու չես կարող քայլել ցանկապատի վրայով ու միաժամանակ մոտենալ Աստծուն: Եթե քրիստոնեական կյանքը լուրջ չես ընդունում, կարող ես սատանայի համար հեշտ զոհ լինել:

Ամեն օր փորձությունները հաղթահարելու միակ ճանապարհը Քրիստոսին հետևելուն կատարյալ նվիրումն է: Դրանից պակասը քեզ հաստատ կգցի խնդիրների մեջ:

3. Դու զիջում ես, երբ փորձում ես դա անել Աստծո ասած ձևով:

Աստված մեզնից յուրաքանչյուրին ստեղծել է կարիքներով ու ցանկություններով: Նա խոստացել է ապահովել մեր բոլոր կարիքներն ու ցանկությունները: Սակայն երբեմն հեշտ չէ իմանալ որևէ կարիք կամ ցանկություն բավարարելու Աստծո ասած ձևը: Հնարավոր է՝ դու հաջողություն չես ունեցել Աստծո ասած ձևով որևէ կարիք բավարարելու հարցում: Քո ներսում անհանգստություն է առաջանում, քանի որ կարիքը դեռևս առկա է: Սատանան մոտենում է և ասում. «Ահա՛ հեշտ ձև քո կարիքը բավարարելու համար: Դու հիմար կլինես, եթե փորձես դա անել Աստծո ասած ձևով: Այսպես թե այնպես, դա քեզ համար չի գործի»:

Սատանան փորձում է քեզ մղել եսասիրաբար մտածելուն: «Դու արժանի ես մտքի խաղաղություն և բավարարվածություն ունենալ հենց հիմա»: Եթե մերժում ես Աստծո ասած ձևով բավարարելու քո կարիքը, դրանով ասում ես. «Ես ինձ ավելի շատ եմ սիրում, քան Աստծուն»: Աստված Հովհաննես 14:15-ում ասում է. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցե՛ք»: Եթե զիջում ես փորձությանը, դու քո կարիքներն ու ցանկություններն Աստծո օրենքից վեր ես դնում:

4. Դու խաբվել ես սատանայից:

Սատանան փորձառու և վարժ է սուտ խոսելու մեջ: Նրա բերած փորձությունների մեծ մասը ստի ինչ-որ չափ է իր մեջ պարունակում: Նա խաբեց Եվային՝ ասելով, որ եթե վերջինս ուտեր այդ ծառի պտղից, իրականում չէր մահանա, այլ Աստծո պես կդառնար: Ճիշտ է, նա պտուղն ուտելուց անմիջապես հետո ֆիզիկապես չմահացավ: Սակայն փորձության պահին չգիտակցեց, որ հոգևորապես մահացավ, երբ անհնազանդ գտնվեց Աստծուն:

Շատ մարդիկ սատանայի խաբկանքներով երկար ժամանակով ընկել են թակարդը: Իսկ երբեմն էլ, գրեթե բոլորը, ում նրանք ճանաչում են, որպես ճշմարտություն են ընդունում այն, ինչն Աստվածաշունչը պիտակավորում է որպես սուտ: Նորադարձ քրիստոնյաները դժվարանում են ընդունել Աստվածաշնչի ասածները որպես ճշմարտություն այն դեպքերում, երբ այն հակառակ է լինում իրենց անձնական փորձառությանը: Քրիստոնյա ուսուցիչներին տրվում են ցուցումներ, թե ինչպես օգնել սատանայի թակարդն ընկած մարդուն:

Բ Տիմոթեոս 2:24-26

«Եվ Տիրոջ ծառան չպետք է կռիվ անի, այլ բոլորի հետ հեզահոգի լինի, սովորեցնելու ունակ, ոխ չպահող, քաղցրությամբ խրատելով իրեն հակառակողներին, որ թերևս Աստված ապաշխարություն տա նրանց՝ ճշմարտությունն ընդունելու և, որպեսզի Սատանայի որոգայթից վերականգնվեն նրանք, որոնք գերի են բռնված նրա կողմից՝ իր կամքին ծառայելու համար»:

Դու Աստծուց խոստում ունես, որ Սուրբ Հոգին քեզ կառաջնորդի ողջ ճշմարտության մեջ (Հովհաննես 16:13): Սատանայի խաբկանքներից խուսափելու միակ ձևը ճշմարտությունն իմանալն է: Աստծո Խոսքն ուսումնասիրելն ու Աստծուն լսելը դրա երկու միջոցներն են: Եթե քո գլխում մի միտք է ծագում, և դու վստահ չես, թե արդյո՞ք դա Աստծուց է, ստուգի՛ր, թե ինչ է այդ մասին ասում Աստվածաշունչը: Եթե դա համընկնում է Աստծո Խոսքի հետ, դու կարող ես միանգամայն վստահ լինել, որ քեզ համար հարմար է դա անելը:

5. Դու սատանային ու նրա փորձություններին լուրջ չես վերաբերվում:

Աստված մեզ Հակոբոս 4:7-ում ասում է, որ դեմ կանգնենք սատանային, երբ նա իր փորձություններով գա: Որոշ մարդիկ կցանկանային խաղաղության մեջ լինել Աստծո և սատանայի հետ: Նրանք հանդուրժում են սատանային. «Նա կյանքում որոշ սխալներ անում է, սակայն ամբողջությամբ վատը չէ»:

Բայց մենք պետք է հստակ կերպով Աստծո կողմից լինենք և մերժենք լսել սատանային, երբ նա գա: Եթե դու դեմ չկանգնես սատանայի խորհուրդներին, շատ արագ կընկնես նրա թակարդը:

6. Դու, հնարավոր է, մտածես, որ մեղք գործելը նորմալ է, քանի որ Աստված միշտ ներում է:

Այն անձնավորությունը, ով մտածում է, որ կարող է այսօր մեղք գործել և, երբ ցանկանա, հեշտությամբ ստանալ Աստծո ներողամտությունը, մեծ դժվարությունների մեջ կընկնի: Այս տեսակի վերաբերմունքը հակառակ է ճիշտ կյանք ապրելու վերաբերյալ Աստվածաշնչի ուսմունքին: (Տե՛ս Առակաց 1-ը, հատկապես 20-33 համարները): Մենք չենք կարող չարաշահել Աստծո ողորմությունը: Ճշմարիտ ապաշխարությունը նշանակում է՝ մեջքով շրջվել մեղքին և նոր ձևով պատասխանել տվյալ կարիքին կամ փորձությանը:

7. Դու թույլ ես տալիս քո ցանկություններին դուրս գալ վերահսկողությունից:

Քո ցանկություններն ու կրքերը կարող են շատ ուժեղ լինել, եթե դու թույլ տաս: Արդյունքում դրանք կվերահսկեն քո մտքերն ու գործողությունները, եթե դրանք չկանգնեցնես: Քո զգացմունքները սերտորեն կապված են քո ցանկությունների հետ: Դու հավանաբար տեսել ես մի մարդու, ով այնքան է բարկանում, որ կորցնում է իր նորմալ մտածելու ունակությունը: Նման իրավիճակներում այդ մարդը սովորաբար ասում և անում է բաներ, որոնց համար հետագայում զղջում է:

Առակաց 7:24-25ա

«Ուստի ի՛նչ լսեցեք, ո՛վ որդիներ, ու իմ բերանի խոսքերին ակա՛նջ դրեք. սիրտդ… թող չշեղվի»:

Աստված այս զգուշացումը տալիս է Առակաց գրքում, երբ ասում է, թե ինչպես խուսափել սեռական փորձություններից:

8. Դու անկեղծ ես, սակայն դեռ զիջում ես փորձություններին:

Ընդունենք, որ արդեն մի քանի ամիս է, ինչ դու ճշմարիտ քրիստոնյա ես դարձել և իրոք ուզում ես ծառայել Աստծուն: Սակայն կա մի փորձություն, որին զիջում ես, երբ ամեն անգամ այն գալիս է: Դու գիտես, որ դա մեղք է: Դու ատում ես այն և անկեղծորեն զղջում քո ձախողման համար ամեն անգամ, երբ մեղք ես գործում: Թվում է՝ դու անկարող ես հաղթահարել այն: Ո՞րն է լուծումը:

Առաջինը, դու պետք է ունենաս Աստծո օգնությունը՝ փորձությունը հաղթահարելու համար: Եթե փորձում ես քրիստոնեական կյանք ապրել սեփական ուժերով, ապա առաջին բանը, որ պետք է անես, ստուգելն է, թե արդյո՞ք Քրիստոսը քո կյանքի առաջնորդն է: Այնուհետև, դու գիտակցաբար պետք է Աստծուն դնես առաջին տեղում՝ քեզ հանդիպող ցանկացած իրավիճակում:

Դու պետք է անկեղծ լինես Աստծո հետ: Փորձության պահին պետք է ասես Աստծուն, թե ինչ է տեղի ունենում քո ներսում: Եթե զգում ես, որ քիչ է մնում՝ զիջես փորձությանը, խոստովանի՛ր սա Աստծո առաջ: Հնարավոր է՝ քեզ համար ավելի հեշտ է աղոթել Աստծուն, երբ ամեն բան արդեն վերջացել է, և դու ձախողվել ես: Շատ ավելի դժվար կարող է թվալ քո աչքերը փորձությունից հեռացնելը՝ նախքան մեղք գործելը, և խոսելը Աստծո հետ՝ նախքան քո ցանկությունը կամ կարիքը բավարարելը: Սակայն սա հզոր միջոց է քո անկումը կանխարգելելու համար:

Քո խնդրի մեկ այլ մաս կարող է լինել այն, որ դու չես աշխատում քո կարիքը կամ ցանկությունն Աստծո ասած ձևով հագեցնելու ուղղությամբ: Դու, ամենայն հավանականությամբ, գիտես, որ սատանայի փորձությանը հետևելը մեղք է, սակայն, միևնույն ժամանակ, ոչինչ չես անում, որ քո խնդրի համար գտնես Աստծո

լուծումը: Կամ, հնարավոր է, գիտես քո կարիքը բավարարելու Աստծո ասած ձևը, սակայն չես նվիրվում, որպեսզի հետևես Աստծուն: Դու պետք է որոշում ընդունես՝ հետևելու Աստծո ասած ձևին, և դրանից հետո թույլ չտաս՝ որևէ բան փոխվի:

Գ. Ի՞նչ պետք է անես փորձությանը զիջելուց հետո:

Եթե դու զիջել ես փորձությանը և մեղք ես գործել, մի՛ հանձնվիր: Աստված քեզ չի մերժել: Մի՛ մնա քո մեղքի մեջ: Կարևոր չէ, թե ինչքան մեծ կամ փոքր է քո ձախողումը, դու պետք է անմիջապես քայլեր ձեռնարկես:

1. Ընդունի՛ր քո ձախողումը:

Մի՛ փորձիր անտեսել քո մեղքը կամ թաքցնել այն: Ընդունի՛ր այն Աստծո և քո առաջ: Խոստովանի՛ր քո մեղքը, և Աստված կների քեզ: Սեփական մեղքն ընդունելը կարող է լինել առաջին քայլը՝ հաղթահարելու այն խնդիրը, որ քեզ տարել է ձախողման: Դու, հավանաբար, օգտակար կհամարես խոստովանել քո մեղքը մեկ այլ քրիստոնյայի, եթե զգաս, որ այդ անձնավորությունը կարող է քեզ օգնել՝ բացահայտելու համար այդ խնդրի լուծման Աստծո ասած ձևը:

Եթե քո մեղքն ազդել է այլ մարդկանց վրա, դու պետք է գնաս և խոստովանես քո մեղքը նրանց և նրանցից ներում խնդրես:

2. Իմացի՛ր կարիքը կամ ցանկությունը, որ դու ունես քո կյանքում, և ծրագի՛ր կազմիր, թե ինչպես այն բավարարել Աստծո ասած ձևով:

Դու պետք է իմանաս քո կարիքներն ու ցանկությունները բավարարելու Աստծո ասած ձևը, եթե ուզում ես հաջողությամբ դեմ կանգնել մեղքի փորձություններին: Եթե անգամ զգում ես քո կարիքը սատանայի ասած ձևով հագեցնելու ժամանակավոր բավարարվածություն, վստա՛հ եղիր, որ այդ լուծումը կարճաժամկետ է: Քո կարիքը կվերադառնա, այնպես որ, ծրագրավորի՛ր, թե ինչպես ես այն բավարարելու հաջորդ անգամ: Դու, հնարավոր է, ցանկանաս դիմել մեկ ուրիշ քրիստոնյայի, որպեսզի նա օգնի քեզ կամ աղոթի քեզ համար:

3. Գնահատի՛ր քո նվիրվածությունը Քրիստոսին:

Երբ դու ձախողվում ես և զիջում սատանայի փորձությանը, կարող ես դա էլ օգտագործել, որպեսզի ավելի մոտենաս Աստծուն: Ասա՛ Աստծուն, թե ինչ ես ուզում անել, և արա՛ բոլոր հարկ եղած փոփոխությունները, որպեսզի Քրիստոսին քո կյանքում պահես առաջին տեղում:

4. Դավանի՛ր զորության վերաբերյալ Աստծո խոստումները:

Աստծո խոստումները միայն այսօրվա քրիստոնեական աշխարհի հռչակավոր առաջնորդների համար չեն: Դու ճիշտ նույնքան իրավունք ունես դավանելու այդ խոստումները, ինչպես նրանցից յուրաքանչյուրը: Փիլիպպեցիների 4:13-ի խոստումը իրական է քեզ համար. «Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ»: Ա Կորնթացիների 10:13-ի խոստումը շատ լավն է անգիր անելու և ինքդ քեզ հիշեցնելու համար, հատկապես, երբ քեզ Աստծուն մոտ չես զգում:

Գտի՛ր այլ համարներ, որոնք կապ ունեն այն առանձնահատուկ փորձությունների հետ, որոնք դու ամենադժվարն ես հաղթահարում, և օրվա ընթացքում հիշեցրո՛ւ այդ համարներն ինքդ քեզ: Կան գրքեր, որոնք խմբավորում են Աստծո խոստումները և կարող են օգտակար լինել քեզ համար՝ կապված քեզ հանդիպող փորձությունների հետ: Խնդրի՛ր քո ուսուցչին գտնելու այդ գրքերը:

5. Մի՛ զնա հանցանքի ճանապարհով:

Մի՛ մնա քո ձախողումների մեջ: Սատանան սիրում է քեզ մեղադրել, երբ դու ձախողվում ես: Նա ամեն բան կանի քեզ վհատեցնելու և հավատացնելու համար, որ դու կատարյալ ձախողակ ես: Մի՛ թույլ տուր նրան իր փաստարկներով քեզ խաբել: Եթե դու խոստովանել ես քո մեղքերն Աստծո առաջ, կարիք չունես հաջորդ երեք օրերը մռայլ տրամադրության մեջ անցկացնել՝ պատժելով ինքդ քեզ քո ձախողման համար:

Սատանան ուզում է, որ դու քո ձախողման պատճառով ցավ զգաս և վհատվես, որպեսզի անգամ չփորձես քրիստոնեական կյանք ապրել: Նա բազմիցս քո ձախողումը կհիշեցնի քեզ մի քանի օր, շաբաթներ կամ անգամ տարիներ անց: Այնուհետև կմեղադրի քեզ. «Տե՛ս, թե դու ինչ արեցիր: Դա ահավոր չէ՞ր: Դու, իրոք, մեղք գործեցիր: Ի՛նչ սոսկալի օրինակ ես դու՝ որպես քրիստոնյա: Դու պետք է քեզ հանցավոր զգաս քո արածի համար»:

Մի՛ լսիր սատանայի ստերը: Եթե Աստված ներել է քեզ, դու կարիք չունես հիշել քո ձախողումները նորից ու նորից:

Եզրակացություն

Այո՛, ժամանակ առ ժամանակ դու կձախողվես՝ ինչպես մյուս բոլոր քրիստոնյաները: Բայց հիշի՛ր՝ զորության և իմաստության համար Աստծուն աղաղակել, որպեսզի կարողանաս դեմ կանգնել սատանայի ուղարկած ցանկացած փորձության:

Եթե դու զարգացնես աստվածաշնչյան ձևը ճիշտ արձագանքելու համար, շուտով կտեսնես, թե ինչպես է սատանան փախչում քեզնից: Աստված խոստացել է, որ սա կլինի:

Հակոբոս 4:7

«Ուրեմն հնազանդվեցե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, և նա ձեզանից կփախչի»:

Դու պետք է նախապատրաստվես փորձությանը և հետևես Քրիստոսի օրինակին՝ ավելի մոտենալու Աստծուն ամեն անգամ, երբ հանդիպում ես փորձության: Քո կարիքներն ու ցանկություններն Աստծո ասած ձևով հագեցնելը քեզ ի վիճակի կդարձնի ապրել հնարավոր լավագույն կյանքը երկրի վրա. բավարարվածությունը տևական կլինի և լի խաղաղությամբ: